


Ա Ա - 475

Պօղմատարներ պալոր լիուկների, սիացե՛ր

ՀՐԱՄԱ ԳԵԼԻԿՅԵՐԻ

ՀԵՄԱՎԻՆ —  
ՍՈՅԱԿԱՐԱՏԱԿԱՆ —  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

817



ԿՈՒՍԴՐՈՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

Հ 2-12709.2

ՎԻՃԱԿ 20105  
Գրութառներ բոլոր յերկների, միացեք

ՀՐԱՆՏ ԳՈԼԻԿՑԱՆ

Հանրային—  
սոցիալիստական—  
սեփականության պատպանությունը

ԽՆՏ. № 36504

ԽՆՏ. №

112 MAR 2013

9-17

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԴԱՄԱԿԱՐԳԻՑԻՆ ՊԱՅՔԱՐԾ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ԴԻԿՏՈ.ՏՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանը կապիտալիստական հասարակակարգի և կոմունիստական, անդասակարգ հասարակության միջև յերկարաձգվող փոխանցման ժամանակաշրջանն է \*): Պրոլետարիատի կողմից իշխանության բռնազրավումը, սակայն, դեռ չի նշանակում դասակարգերի լիկվիդացիա. փոխանցման ժամանակաշրջանում շարունակում են գոյություն ունենալ դասակարգեր. վորպես դասակարգ մնում ե ինքը՝ պրոլետարիատը, անշուշտ վոչ այլևս վորպես շահագործվող, կեղեքվող դասակարգ, այլ վորպես գերիշխող դասակարգ, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հեղեմոն, վորպես վոչ-պրոլետարական բոլոր աշխատավորական մասսաների կազմակերպիչն ու ղեկավարողը, վորպես սոցիալիզմ կառուցող դասակարգ. Մնում ե նաև գյուղացիությունը վորպես մամնավոր արտադրողների հատուկ դասակարգ և, վերջապես, մնում են ջախջախված

\* ) «Կապիտալիստական և կոմունիստական» հասարակության միջև ընկնում և առաջինը հեղափոխականորդն յերկրորդին վերածելու շրջանը. Այդ շրջանին համապատասխանում ե նաև քաղաքական փոխանցման շրջանը, և այդ շրջանի պետությունը չի կարող այլ լինել քան պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան», ասել ե մարքսիզմի հիմնադիրը Գոթայի ծրագրի քննադատության մեջ:



3789-87

բուրժուազիայի մնացորդները—քաղաքի և գյուղի կապիտալիստական ելեմենտները:

Անդասակարգ սոցիալիստական հասարակության ստեղծումը հնարավոր է միայն սոցիալիստական շինարարության պրոցեսով, ամբողջ ժողովրդական տնտեսության և կենցաղի վերափոխման, դասակարգերի գոյության և զարգացման բոլոր պայմանները և պատճառները լիովին արմատախիլ անելու միջոցով, թշնամի դասակարգային ուժերի դիմադրությունը վճռական ու անխնա խորտակելու և կապիտալիստական հասարակակարգը ռեստավրացիայի յենթարկելու բոլոր փորձերը ժամանակին լիկվիդացիայի յենթարկելու ուղիղով և վերջապես իր, դասակարգի ներսում հինգապիտալիստական հասարակակարգը ռեստավրացիայի յենթարկելու միջոցով: Սրանից յերեսում ե, վոր պրոլետարիատի դիկտուրայի շրջանը դասակարգային պայքարի շարունակությունն ու սրումն ե, տարբեր ձևերով ու յեղանակներով: Լենինն իր մարքսիստական դիալեկտիկայի սպառիչ վերլուծումով ընդգծել ե, վոր «պրոլետարիատի դիկտուրան համառ կոիվ ե, արյունու ու անարյուն, բռնի ու խաղաղ, ուղմական ու տնտեսական, մանկավարժական ու վարչական՝ ուղղված հինգ հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ» (Լենին. Ժողովածու ՀХV, եջ 191, հը. Բ.):

Հետևաբար պրոլետարիատի վրա ծառացող պատմական միսիան եւ դասակարգային պայքարը հասցնել մինչեւ իր տրամաբանական վախճանը, այլ խոսքով՝ մինչեւ դասակարգերի վերացումը, մինչեւ հասարակության դասակարգային բաժանման և այդ բաժանումն ստեղծող սոցիալտնտեսական պայմանների լիակատար վոչնչացումը, մինչեւ անդասակարգ կոմունիստական հասարակության կազմա-

կերպումը, յերբ գոյություն չի ունենա նաև ինքը՝ պրոլետարիատը\*):

Պրոլետարիատի դիկտուրայի պատմաշրջանում դասակարգային պայքարի հիմքը կազմում է պայքարող յերկու տարբեր սոցիալ-եկոնոմիկական ֆորմացիաների հակադրությունը, անհաջողությունը: Այդ դասակարգային պայքարը «մեռնող կապիտալիզմի և ծնվող կոմունիզմի» պատմական գոյամարտն եւ Յեկանի աճում ու զարգանում, ամրանում ու հաղթանակում և սոցիալիստական տնտեսությունը, ավելի կատաղի և որհասական և դառնում կապիտալիստական ելեմենտների—կուլակության և քաղաքային բուրժուազիայի մնացորդների ու նրանց քաղաքական ագենտուրայի ընդդիմությունը:

Պատմությունը ցույց է տալիս, վոր վոչ մի դասակարգ ինքնակամ չի հեռացել պատմության թատերաբեմից: Միշտ ել բարձրացող նոր դասակարգի տիրապետությունը և նրա ներկայացրած արտադրական ու այլ հասարակական հարաբերությունների սիստեմը կարողացել ե հիմնավորվել և ուժեղանալ նախկին տիրապետող դասակարգի հե-

\* «Քանի դեռ գոյություն ունեն նաև ուրիշ դասակարգեր, մասնավորապես կապիտալիստական դասակարգը, քանի դեռ պրոլետարիատը կովում և նրանց հետ (քանի վոր նրա իշխանության անցնելով նրա թշնամիները չեն վոչնչանում, չի վոչնչանում հինգասարակական կառուցվացքը), նա պարտավոր ե ի գործ գնել բռնության միջոցները, քանի վոր բռնությունը՝ կառավարման միջոց ե, յեթե նա ինքը դեռ մնում է դասակարգ և յեթե դեռ չեն չքացել այն տնտեսական պայմանները, վորոնց վրա հենված ե դասակարգային պայքարը, այլ խոսքով՝ դասակարգերի գոյությունը, ակետք և բռնությամբ վերացվեն և վերափոխվեն, նրանց վերափոխման պրոցեսը պետք է բռնությամբ արագացվի» (Կարլ Մարքսի դիտողություններ Բակունինի «Պետականություն և անարխիա» դրքի մասին):

դափոխական բռնի տապալման միջոցով միայն։ Մարքս-լենինյան տեսությունը հերքում է այն ոպորտունիստական տեսակետը, թե Տնարավոր է անցնել անդասակարգ հասարակության ինքնահոսով, առանց կույի։ Աջ ոպորտունիզմի գաղափարախոս Բուխարինը փորձում էր ապացուցել, վոր «խորհրդային իշխանության ուժը ևնրա ամրությունն այնքան բացորդ է, վոր մեր հասարակության բուրժուական խավերի համար բոլորովին ակնհայտ է նոր կարգի դեմ պայքարի, ակտիվ և սուր քաղաքական կույի փորձերի լիակատար անհուսալիությունը»։

Նրանք, ովքեր մոռացել են Լենինի նախազգուշացումներն այն մասին, վոր կուլակությունը սոցիալիզմի ամենավոխերիմ թշնամին է, նրանք, համենայն դեպս, չեն մոռացել մեր ժողովրդական տնտեսության վերակառուցման շրջանում տապալված, ջախջախված, բայց դեռ չփոչնչացված կապիտալիստական դասակարգերի ու նրանց քաղաքական ազենտուրայի քաղաքական-տնտեսական պայքարի, նրանց հականեղափոխական վասարարության խոշոր ու կազմակերպված դավադրությունները։ «Սրդյունաբերության կուսակցության», մենչեւիների «խորհրդային բյուրոյի», «աշխատավորական գյուղացիական» կուսակցության, ելեկտրոհիդրոկայանների վասարարության վերաբերյալ դատավարությունները միանգամայն յեկան ապացուցելու ոպորտունիստական վտանգավոր այն տեսությունը, թե կուլակությունը կարող է խաղաղ ձևով ներածել սոցիալիզմի միջ, վոր աջ ոպորտունիստական այդ տեսությունը և նրա պրակտիկան հականեղափոխության ոգտին մատուցված արջի ծառայություն է։ Մարքս-լենինյան հեղափոխական թեորիան միշտ ել պնդել ու հաստատել է, վոր դասակարգերի վոչնչացումը, անդասակարգ հասարակության անցման պրոցեսը նշանակում է ամենավճռական, ամենահետեղական

պայքար կապիտալիստական դասակարգերի ու կապիտալիստական ելեմենտների հետ։

Առաջին հնգամյակի իրականացումով մենք համատարած կոլեկտիվացման հիման վրա հիմնականում վերացրինք վերջին կապիտալիստական դասակարգը—կուլակությունը, բայց այդ դեռ չի նշանակում, վոր մենք լիկիվրացիայի յենթարկեցինք կապիտալիզմի ելեմենտների ու կապիտալիստական հարաբերությունների մասցորդները։

17-րդ կուսկոնֆերենցիան այս տեսակետից իր պատմական դիրեկտիվներով հետևյալ հիմնական խնդիրներն առաջարկեց։ 1) անցում դեպի անդասակարգ սոցիալիստական հասարակություն, լիկիվրացիա կապիտալիստական և պարագիտ (հացկատակ) ելեմենտների, լիկիվրացիա կապիտալիստական հարաբերությունների հնարավորության, 2) նորագույն տեխնիկայի հիման վրա ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների վերակառուցման ավարտում, 3) աշխատավորական մասսաների կուլտուրայի ու կենցաղի նոր մակարդակի վրա բարձրացում և 4) քաղաքի և գյուղի հակասությունը վերացնելու համար հիմնական նախապայմանների ստեղծում։ Այս վիթխարի տնտեսական-քաղաքական խնդիրների լուծումն է, վոր ծառանում է անդասակարգ սոցիալիստական հասարակություն ստեղծելու կոչված 2-րդ հնգամյակի առաջ իսկ այդ խնդիրների լուծման ուղին դասակարգային պայքարի միջոցով և հարթում իր ճանապարհը։ 17-րդ կուսկոնֆերենցիան մարքս-լենինյան դիրեկտիվայի պարզությունը ընդգծեց, վոր սոցիալիստական արշավի հաջողությունն անխուսափելիութեն առաջ ե բերում դասակարգային պայքարի սրումը՝ նոր ձևերով առանձին շրջաններում և սոցիալիստական շինարարության առանձին ճակատամասերում։ Վերջին տարվա իրադարձությունները յեկան հաստատելու, վոր ջախ-

ջախված, բայց դեռ լիովին չփոչնչացված դասակարգային թշնամին ուժեղ փորձեր և անում արգելակելու մեր սոցիալիստական առաջնադաշտումը, քայլայելու մեր սոցիալիստական անտեսությունը, քաղաքում և հատկապես գյուղում և այդ նպատակով նա ձգտում է սողոսկել կոլտընտեսությունների ու խորհրդային անտեսությունների ներսը, տեղ դրավել, դեկավարության մեջ և այնտեղից՝ ներքուստ կազմալուծել սոցիալիստական գյուղատնտեսությունը, վեասարարություն կատարելով և սաբուտաժ կազմակերպելով պետության առաջադրությունների՝ մթերումների նկատմամբ, հավշտակելով խորհրդային իրավակարգի հիմքը կազմող հանրային (սոցիալիստական) գույքը։ Սոցիալիստական տնտեսության և մասնավոր սեփականության պատմական գոյամարտն ե, վոր մեր շինարարության և դասակարգային պայքարի ներկա փուլում շարունակվում ե նոր ձեերով, նոր մեթոդներով ու նոր տակտիկայով։

Ներկա հնդամյակում տեղի պետք ե ունենա արտադրական միջոցների մասնավոր սեփականության լիակատար վոչնչացումը, իսկ դա, ըստ եյության, նշանակում է կապիտալիստական ելեմենտների ամբողջական լիկվիդացիա։ Ավելին. դա նշանակում է նաև վոչնչացումն այն պատճառների, վորոնք ծնում են դասակարգային տարբերություններ, քանի վոր դասակարգային հակադրությունները ծագում են առնում արտադրական միջոցների մասնավոր սեփականությունից։

Սրանից հետևում ե, վոր արտադրական միջոցների մասնավոր սեփականության լիակատար վոչնչացումն ե այն հիմքը, վորի վրա տեղի յե ունենում կապիտալիստական ելեմենտների լիկվիդացիան, հետեւաբար նաև դասակարգային տարբերություններ առաջացնող պատճառների վոչնչացումը։

Իսքնին հառկանալի յե, վոր կապիտալիստական հարաբերությունների և ելեմենտների տնտեսական հիմքը կազմող մասնավոր սեփականության վոչնչացման այս պատմական սլրոցեսն առաջ պիտի ընթի քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարբերությունների մնացորդների, հատկապես կուլակության, բուռն, համառ գիմադրությունը։ Յեվ քանի մոտենում է կապիտալիստական ելեմենտների վերջնական լիկվիդացիայի ժամը, այնքան ավելի կատաղի յե դառնում նրանց որհասական կոփվը։ Զախշախված դասակարգային թշնամին, հարկավ, համաձայն դասակարգային ուժերի նոր տեղաշարժերի ու հարաբերության, փոխում ե իր դիմագրության, իր պայքարի մեթոդները, իր տակտիկան, բաց կովի մեթոդներից անցնելով ընդհատակյա, քողարկյալ թագուն ձևերի։ Նույնիսկ կապիտալիստական ելեմենտների տնտեսական հիմքի՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերջնական և ամբողջական վոչնչացումից հետո ել դասակարգայնորեն թշնամի, անհարազատ տարբերը (կուլակը, նեպմանը, սպեկուլյանտը) պիտի շարունակեն իրենց պայքարը, քանի վոր նրանց տնտեսական հիմքի լիկվիդացիան դեռ չի նշանակում պիտակցության անմիջական վերափոխում։ Անշուշտ տարբեր են նրանց պայքարի ընույթը, մեթոդները, յերբ կուլակն ու նեպմանն ունեն իրենց տնտեսությունը և այդ տնտեսությունը դարձնում են պայքարի, զիմադրության անհրաժեշտ բազա՝ սոցիալիստական ծավալուն արշավին զիմադրավելու համար, իրենց գոյությունը յերկարածով համար։ Բոլորովին այլ և լինելու նրանց պայքարը և դրա մեթոդները, յերբ նրանք լիովին զրկված արտադրության միջոցներից, ինքնուրույն տնտեսության բազայից, շարունակում են իրենց պայքարը թեկուղ տեղափորփած սոցիալիստական շինարարության այս կամ այն ողակում, հետեւաբար չպետք

ե մոռանալ այն կարևոր հաճգաւաճնքը, վոր կապիտալիստական ելեմենտների տնտեսական արժատների ամբողջական վոչնչաշումից հետո ել գեռ յերկար ժամանակ շարունակվելու յե այդ ելեմենտների դիմադրությունը:

Կապիտալիստական ելեմենտների տնտեսական հիմքի վոչնչացման ներկա պատմական պրոցեսը դասակարգային պայօնարի նոր, ավելի բարդ ու հետևաբար ավելի պատասխանատու փուլումն ե գտնվում: Այդ փուլի վրա յե, վոր մեր ուշադրությունը հրավիրեց Համեկ(թ)ե կե և կե-ի հունվարյան սպատմական սլենումը և հատկապես կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը առաջին հնդամյակի արդյունքների և գյուղի աշխատանքի նկատմամբ իր արտասանած ծրագրային ճառերում:

Վերջին ժամանակներս,—ասում ե ընկ. Ստալինը,—փոխվել ե դասակարգային թշնամու դեմքը, փոխվել ե դասակարգային թշնամու գործելակերպը գյուղում: Դասակարգային թշնամին հասկացել ե փոխված դրությունը, հասկացել ե գյուղի նոր իրավակարգի ուժն ու կարողությունը, փոխել ե իր գործելակերպը, կոլտնտեսությունների դեմ ուղղակի դրոհ տալուց անցել ե ընդհատակյա աշխատանքի: Իսկ մենք այդ չենք հասկացել չենք ըմբռնել նոր պայմանները և շարունակում ենք փնտռել դասակարգային թշնամուն այնտեղ, վորտեղ նա չկա այլևս, շարունակում ենք մեր հին տակտիկան՝ պարզ ձևով պայքարել գյուղում կուլակության դեմ, մինչդեռ այդ տակտիկան վազուց արդեն հնացել ե: Ներկայիս կուլակները և յենթակուլակները նստած են հենց կոլտնտեսության մեջ և վարում են այնտեղ պահեստավետների, ծախսարարների, հաշվետարների, քարտուղարների և այլ պաշտոններ: Նրանք յերբեք չեն ասի՝ «կորչեն կոլտնտեսությունները» նրանք «կոլտնտեսություններին կողմակից են», սակայն կոլտնտեսություններում սաբուտա-

ժային և վնասարար այնպիսի աշխատանք են կատարում, վոր կոլտնտեսությունները վողջ չեն սլքնումնրանց ձեռքից: Այդպիսի ճարպիկ թշնամուն տեսնելու և դեմագոգիայի չենթարկվելու համար պետք ե ունենալ հեղափոխական դգաստություն, պետք ե ունենալ ընդունակություն՝ պատռելու թշնամու դիմակը, ցույց տալու կոլտնտեսականներին նրա իսկական հականեղափոխական դեմքը:

Կուլակները ջախջախվել են, սակայն գեռ հեռույեն վերջնականական վոչնչացված լինելուց: Դեռ ավելին. նրանք գեռ շուտով վերջնականապես չեն վոչնչացվի, յեթե կամունիստները հորանջեն ու բարեհոգություն անեն՝ յենթարեկով, վոր կուլակներն իրենք գերեզման կիջնեն, այսպես ասած՝ իրենց գարգացման կարգով...»:

Դասակարգային թշնամու պայքարի նոր տակտիկան ամբողջովին մերկացվեց վերջին տարվա բերքահավաքի ու հացացամթերությունների ժամանակ ինչպես Խորհրդային Միության այլ վայրերում, Հյուսիսային Կովկասում, Ռւկայինայում, Ստորին Վոլգայում, նույնպես և մեզ մոտ Խորհրդային Հայաստանում:

«Նախկին մարդիկ», վորոնց սոցիալիստական հաղթական գրոհը դուրս շպրտեց արտադրությունից, այժմ փորձում են վնասել գյուղի սոցիալիստական վերակառուցման հոյակապ գործին, աշխատում են քայքայել կոլտնտեսությունները, վնասել սոցիալիստական արդյունաբերությանը:

Դա դասակարգային պայքարի լոգիկսն ե:

Կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը մարքսիստական-լինիսյան դիալեկտիկայի իր փորձված գենքով, ծայրագույն պարզորոշությամբ դեռ 1929 թ. աջ թեքման վերաբերյալ իր ճառում ընդգծել ե, վոր «պատմության մեջ գեռես չի յեղել այնպիսի դեպք, վոր մեռնող դասակարգերը կամովին հեռանան ասպարեզից: Պատմության մեջ դեռ չի յեղել

այնպիսի դեպք, յերբմա հ ացող բուրժուազիան փորձած չլինի իր ուժերի բոլոր մնացորդները՝ իր գոյությունը պաշտպանելու համար: Լավ կլինի արդյոք մեզ մոտ խորհրդային ստորին ասլարատը թե վատ, մեր առաջնորդացը, մեր արշավը կնվազեցնի կապիտալիստական տարրերին և դուրս կմղի նրանց, իսկ նրանք, մեռնող դասակարգերը, դիմադրություն ցույց կտան հակառակ ամեն ինչի»:

Դասակարգային թնամու արագորեն վոչնչացումը հրամայականորեն պահանջում է բարձրացնել հեղափոխական զգոնությունը, ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան, անինա կրակ բաց անել ոպորտունիզմի ու հատկապես ներկա ետապում զլսավոր վատնդ հանդիսացող աջ թեքման վրա, ամրացնել հեղափոխական որինականության մարտական ֆրոնտը:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆՔԻ ՀԻՄՔՆ Ե

Կապիտալիստական հասարակակարգի հիմքը մասնավոր սեփականությունն ե: Իշխանության համար ֆեոդալիզմի կապանքների դեմ պայքարող յերրորդ դասակարգը—բուրժուազիան իր իրավակարգի տնտեսական հիմքի դադարախալսուական— իրավական ձևակերպումը տվեց մասնավոր սեփականության ինստիտուտի միջոցով, վորպես անհրաժեշտ իմպուլս ապրանքային տնտեսության անարդել դարգացման: Ֆրանսական մեծ հեղափոխությունը սրբազն ու անձեռնմխելի հայտարարեց մասնավոր սեփականությունը, այլ խոսքով՝ արտադրության միջոցներն ամրացրեց բոնի ուժով քաղաքական իշխանության հասած բուրժուական դասակարգին: 1789 թ. ոգոստոսի 26-ին ազգային ժողովի կողմից

ընդունված «մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան» վերջնականապես քաղաքական-իրավական ձևակերպում տվեց մասնավոր սեփականությանը: Նա վորպես նոր ավետարան հոչակեց, վոր «ամեն մի քաղաքական միության նպատակն է քաղաքացու բնական անոտարելի իրավունքների պաշտպանությունը»: «Քանի վոր սեփականությունն անձեռնմխելի ու սրբազն իրավունք ե, հետևաբար վոչ վոքի չի կարելի զրկել այդ իրավունքից»: Այս թեզիսը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ կապիտալիզմի ամենակենսական շահների սոցիալ-իրավական ձևակերպումը:

Կապիտալիզմի ամբողջ պատմությունն ապացուցեց, վոր կապիտալիստական մասնավոր սեփականությունը ժիտում ե քաղաքացու ամենատարրական իրավունքը—սեփական աշխատանքի սեփականությունը:

Քաղաքացու բնական իրավունքի ցուցանակի տակը բուրժուազիան արյունով ամրապնդեց իր տիրապետության տնտեսական դիրքը: Մասնավոր սեփականության անձեռնմխելիությունն ու սրբազնությունը բուրժուական հեղափոխական դրոշակն եր ֆեոդալիզմի դեմ, կապիտալիստական հասարակակարգի հիմքը, մարդը մարդու ձեռքով շահագործելու և կեղեցելու միջոցը:

«Ժամանակակից բուրժուական մասնավոր սեփականությունն արտադրության յեղանակի պրոդուկցիան յուրացնելու ամենավերջին ու ամբողջական արտահայտությունն ե, հենված դասակարգերի հակամարտության, վոմանց կողմից ուրիշների շահագործման վրա»: Ահա մարքսիստական սպառիչ անալիզը բուրժուական դասակարգի տնտեսական հիմքի—մասնավոր սեփականության ինստիտուտի:

Բուրժուազիան սրով ու հրով դատաստան տեսավ,—և տեսնում ե նաև այժմ,—իր հասարակակարգի վոչնչացման, քայլայման ներկա պատմաշրջանում բոլոր այն բանվո-

բական, աշխատավորական մասսաների հետ, վորոնք սպառնում են կապիտալիստական մասնավոր սեփականությանը, նրանց հետ, ովքեր սպառնում են արտադրության միջոցների մասնավոր սեփականությանը: Բուրժուական պետությունը շարժման մեջ դրեց իր՝ ճնշման ու հարկադրանքի բոլոր ուժերը՝ դատարանները, բանտերը, յեկեղեցին, վոստիկանությունը, բանակը և իդեոլոգիական բոլոր միջոցները՝ պաշտպանելու համար բուրժուական հասարակակարգի հիմքը կազմող մասնավոր սեփականությունը:

Չնայած այն հանգամանքին, վոր Թրանսական մեծ հեղափոխությունն իր դրոշակի վրա մասնավոր սեփականության անձեռնմխելիության կողքին գրեց նաև «հավասարության» լոգունով, սակայն կապիտալիստական, այլ խոսքով՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն ե, ըստ եյության, համազոր, համիմաստ վոչ միայն տնտեսական, այլև իրավական անհավասարության: Մարքսը խոսելով հողային ոնտայի մասին, վորպես արտադրության միջոցների սեփականության բնորոշ ձևի, հատուկ ամեն մի դասակարգային հասարակության, ընդգծել ե, վոր «այն առանձնահատուկ տնտեսական դերը, վորի մեջ ծնվում ե անմիջական արտադրողներին չփառված հավելյալ արժեքը, սահմանում ե տիրապետության-յենթակայության հարաբերություն (ստրկություն): Իրավական ձևական հավասարության պատրանքի տակ փաստական տնտեսական անհավասարության պատմական յերեսույթն ամենից ավելի բնորոշ ե և առանձնահատուկ կապիտալիստական հասարակակարգի համար, քանի վոր արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն ե, վոր հնարավորություն ե տալիս բուրժուական դասակարգին անխնաշահագործելու, կեղեքելու պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը:

«Կոմունիստական մանկֆեստ»-ում Մարքսը և Ենգելսը մերկացրին սրբազն սեփականության բուրժուական լոգունով ներքին բովանդակ զգվելիությունը: «Դուք վրդովված եք նրա համար, վոր մենք ուղում ենք վոչնչացնել մասնավոր սեփականությունը: Բայց ձեր ներկա հասարակության մեջ մասնավոր սեփականությունն արդեն վոչնչացված ե ազգաբնակչության <sup>9/10</sup>-ի համար»:

Բնականաբար բուրժուազիան մասնավոր սեփականության դեմ ուղղված ամեն մի վոտնձգությունը համարում է կտապիտալիստական հասարակակարգի վրա կատարված մահափորձ և արյունով դատաստան ե տեսնում պրո-լետարական-աշխատավորական լայն մասսաների հետ, վորոնց իրավագրկումով, սեփականազրկումով և պայմանավորված իր դասակարգի տիրապետությունը, տնտեսական հզորությունը:

Բուրժուազիայի քրեական իրավունքն ու քրեական քաղաքականությունը, վորի միջոցով բուրժուազիան հաշիվ ե տեսնում հեղափոխական պրոլետարիատի ու առնասարակ բոլոր շահագործվող աշխատավորների հետ հանդիսանում է դասակարգային տիրապետության և հարկադրանքի հզոր գենք, վորով պաշտպանության տակ ե տոնվում բուրժուազիայի քաղաքական տիրապետությունն ու կտապիտալիստական անտեսական շահագործումը: Առհասարակ մասնավոր սեփականության ինստիտուտը պատմական այն տնտեսական հիմքն ե, վորի վրա բարձրացավ քրեական իրավունքի վերնաշենքը: Բուրժուական քրեական իրավունքի ամենակարևոր պրինցիպներից մեկը մասնավոր սեփականության և մասնավոր սեփականատերի պաշտպանության սկզբունքն ե, վորի կենսագործման համար և պայքարում բուրժուազիան դասակարգային արդարադատությունն իր բոլոր պարտաներով և վորի հավերժացումն ե հանդիսանում

Քրեական իրավունքի բուրժուական գիտությունն ու որենսությունը:

«Ամբողջ որենսության նպատակն ե ունեորներին պաշտպանել չունետրներից: Որենքներն անհրաժեշտ են լոկ այն պատճառով, վոր գոյություն ունեն չունեորներ», ասում ե Ենգելսը:

Մարքսիստական այս վերլուծումն իր հիմնավորումն ե ստանում բուրժուական բոլոր յերկրների որենսությամբ, քանի վոր տնտեսական հանցագործությունների համար նախատեսված ռեպրեսիաները խիստ ծանր են, և քրեական որենսգրքով նախատեսված մասնավոր սեփականության պաշտպանության հետ համեմատած խիստ աննշան ե բանվորների կյանքի ու անվտանգության պաշտպանությունը:

Հետևաբար սեփականության հարցը յուրաքանչյուր հասարակական կառուցվածքի ամենահիմնական ու կենսական պրոբլեմն ե, սեփականությունը դասակարգային պայքարի առարկան ե:

Սոցիալիստական հեղափոխությունը փոխում ե սեփականության խարակերը: Մարքսը «Կապիտալ» մեջ պատմական այս պրոցեսի հանձարեղ բնութագրումը տվեց իր հետևյալ լուսաբանությամբ. «յուրացման կապիտալիստական յեղանակը, վորը ծնունդ ե առնում արտադրության կապիտալիստական յեղանակը, վորը ծնունդ ե առնում արտադրության կապիտալիստական յեղանակից, հետևաբար նաև կապիտալիստական մասնավոր սեփականությունը, առաջին բացասումնեանհատական մասնավոր սեփականությանը, հիմնված սեփական աշխատանքի վրա: Բայց կապիտալիստական արտադրությունը բնության անխուսափելի պրոցեսով առաջ ե բերում սեփական բացասումը: Դա բացասման բացասումն ե, դա բանվորի մասնավոր սեփականությունը չե, վոր վերականգնում ե, այլ կապիտալիստական աշխարհը գրավելու հիման վրա ինդիվիդուալ սեփականությունը, այլ

խոսքով՝ կոոպերացիայի և հողի ու արտադրության այլ միջոցների վրա, վորոնք արտադրված են իրենց իսկ աշխատանքով»:

Պատմության մեջ առաջին անգամ հոկտեմբերյան հեղափոխությունն եր, վոր վոչնչացրեց կապիտալիստական մասնավոր սեփականությունը, եքսպրոլիտացիայի յենթարկելով բուրժուազիայի արտադրության միջոցները:

Պրոլետարական հեղափոխությունն եր, վոր պատուց արտադրության հասարակական բնույթի և նրա կապիտալիստական պատյանի միջև յեղած վարագույրը: Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց կապիտալիստական մասնավոր սեփականությունը, վոչնչացնելով նաև կապիտալիստական պայքարի կյանքի ու անվտանգության պաշտպանությունը:

Սոցիալիստական հեղափոխությունը փոխեց սեփականության բնույթը, սեփականությունը դարձավ հանրային (սոցիալիստական):

Խորհրդային Ռուսաստանի Խորհուրդների Յ-րդ համագումարում, 1918 թ. ընդունված «Աշխատավորության ու շահագործվող ժողովուրդների իրավունքների ղեկարացիայում, Հոկտեմբերյան հեղափոխության հանձարեղ առաջնորդ Լենինը գրեց «Վորաբես հիմնական խնդիր առաջարկելով մարդու կողմից մարդուն ամեն մի շահագործման վերացում, ամբողջական վերացումը հասարակությունը դասակարգերի բաժանման, անխնա ճնշել շահագործողների գիւմադրությունը, հաստատել հասարակության սոցիալիստական կազմակերպությունը և բոլոր յերկրներում սոցիալիզմի հաղթանակը, հողի մասնավոր սեփականությունը վերացվում ե, հողն իր կառուցումներով և ինվենտարներով հայտարարվում ե ամբողջ աշխատավորական ժողովրդի հարստությունը: Բանվորական համայնքների հանդիսանում ե

առաջին քայլը դեպի Փաբրիկաների, զավոդների, հանքերի, յերկաթուղիների և արտադրության ու տրանսպորտի այլ միջոցների ամբողջական փոխանցման բանվորա-գյուղացի-ական պետության սեփականությունն. բոլոր բանկերը դառնում են պետության սեփականությունը, վորածու աշխատավորական մասսաները կապիտալի լծից ազատագրելու պայմաններից մեկը»:

Եերկու հեղափոխություն—սեփականության յերկու տարրեր սիստեմ:

Բուրժուական հեղափոխությունից սկսած մինչև հիմա աշխարհի  $\frac{5}{6}$  մասում դեռ ծածանվում ե «Մասնավոր սեփականությունը սրբազն ու անձեռնմխելի» դրոշակը և տիրապետող ու շահագործող դասակարգը իր եներգիայի ամբողջական լարումով, հարկադրանքի և իդեոլոգիական ազգեցության բոլոր ուժերով, խարեյության և ստի ամենանուրբ պրիոնների միջոցով աշխատեց ամրացնել իր իրավակարգի տնտեսական հիմքը, կապիտալիստական սիստեմի տնտեսության հիմնական անկյունաքարը կազմող մասնավոր սեփականությունը: Պրոլետարական հեղափոխությունն իր դրոշակի վրա գրեց «Սոցիալիստական սեփականությունը սրբազն և ու անձեռնմխելի». հանրային սեփականությունը խորհրդացյին հասարակակարգի հիմքըն ե: Յեվ արդարե, ինչ կիներ հեղափոխության ճակատագիրը, յեթե արտադրության հիմնական միջոցները, ժողովրդական տնտեսության հիմնական բարձունքներն սկզբից եեթ չլինեյին հաղթական պրոլետարիատի ձեռքում, յեթե եքսպրոպրիացիայի չենթարկվեյին շահագործող դասակարգերը: Հնարավոր կիներ արդյոք քաղաքական իշխանությունը պահել առանց տնտեսական ֆունդամենտի, կարելի կիներ արդյոք սոցիալիզմի կառուցումն առանց հանրային սեփականության:

Անշուշտ վոչ:

Հետեւաբար սեփականության խնդիրը յուրաքանչյուր հասարակակարդի ամենակարդինալ, ամենաարմատական հարցն ե, սեփականությունը դասակարգային պայքարի ու գոտեմարտի հիմնական ոբյեկտն ե:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կոմունիստական կուսակցության կենտրոնական տնտեսական խնդիրը ամբողջ փոխանցման ժամանակաշրջանի համար դարձավ պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման ու զարգացման հետ միաժամանակ համառ պայքար սոցիալիզմի շուտափույթ կառուցման համար:

Այս սոցիալ-տնտեսական բարդ պրոբլեմի լուծման հաջողությունը պահանջում եր, վոր պրոլետարիատն իր հետեւից տանելով գյուղացիության չքավոր ու միջակ մասսաներին, վոչ միայն աղքայնացներ հողը, գործարանները, արտադրության միջոցներն ու գործիքները, այլև միաժամանակ ամենավճռական, անխնա կոփվ մղեր նախկին շահագործող դասակարգերի դեմ, այդ պայքարի պրոցեսում ավելի և համախմբելով ու կազմակերպելով իր ուժերը, նպատակ դնելով վերջնականապես վոչնչացնել այդ դասակարգերը և նրանց մնացորդներն, արմատախիլ անելով կապիտալիստական տնտեսության բոլոր մնացորդները:

Բոլորին հայտնի յե այն բացառիկ նշանակությունը, վոր Հոկտեմբերյան հեղափոխության հանճարեղ առաջնորդը նվիրում եր եկոնոմիկային՝ քաղաքականության համար, վորակելով վերջինս վորպես կոնցենտրացիայի յենթարկված եկոնոմիկա: Կուսակցության Ց-րդ համագումարը կուսակցության ծրագրի մեջ իր տնտեսական քաղաքականությունը հետեւյալ կերպով ձևակերպեց.

«Անշեղ շարունակել և մինչև վերջը հասցնել սկսված և հիմնականում ու գլխավորապես արդեն վերջացած՝ բուր-

ժուազիայի եքսալրուպրիացիան—արտադրության միջոցները դարձնել աշխատավորության սեփականությունը:

Կապիտալիստական սիստեմի տնտեսության հիմքերը վերջնականապես կործանելու, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը վերացնելու և սոցիալիստական տնտեսության հիմքերն ամրացնելու այս հիմնական քաղաքականությունը կռւսակցությունը շարունակեց համառ ու անշեղ կերպով մեր ժողովրդական տնտեսության բոլոր շրջաններում սկսած ուազմական կոմունիզմից, անցնելով վերականգնման ու վերակառուցման շրջանները և հաղթականորեն կենսագործելով ամբողջ ճակատով կապիտալիստական ելեմենտների վրա՝ ծավալուն արշավի քաղաքականությունը: Մեր յերկրում սոցիալիզմը կառուցելու տնտեսական այս հիմնական քաղաքականության կենսագործումն էր հաղթական ճանապարհը հարթեց դասակարգային պայքարի սրման ու բարդացման պայմաններում՝ մեթոդների ու տակտիկայի համապատասխան փոփոխություններսից:

Դյուզում կապիտալիստական վերջին դասակարգի հիմնական եքսալրուպրիացիան նույնպես տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, չնորիկ հողի ազգայնացմանը, գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցների պետականացմանը: Նոր տնտեսական քաղաքականության ընթացքում գյուղատնտեսության բնագավառում կենսագործված քաղաքականությունը՝ քաղաքի և գյուղի, արդյունաբերության ու գյուղատնտեսության զոդման ամրապնդումը, յերկրի ինդուստրալիզացիայի պայմաններում հնարավորություն տվեց պրոետարիատին, կոմկռւսակցության ու նրա հանճարեղ ղեկավար ընկ. Ստալինի ղեկավարությամբ առաջադրել ու հաջողությամբ լուծել համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը փորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու պատմա-

կան ամենաբարդ ու դժվար պրոբլեմը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վրապես դասակարգի վերացման քաղաքականությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ կապիտալիստական այդ վերջին դասակարգն արտադրության միջոցներից իսպառ զրկելը, այլ խռաքով՝ կուլակության եքսալրուպրիացիան, կապիտալիստական մասնավոր սեփականության վերջնական ու ամբողջական վոչընչացումը:

Կռւսակցության 17-րդ կոնֆերենցիան հանրագումարի յենթարկելով մեր ժողովրդական տնտեսության և հատկապես հնգամյակի արդյունքները, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում ձեռք բերված աննախընթաց հաջողությունները, արձանագրեց, վոր՝

1) Հնգամյակը չորս տարում իրագործելու համար մըղված պայքարի հաջողություններն իրենց արտահայտությունը գտան սոցիալիզմի հաղթական շինարարության մեջ ԽՍՀՄ-ում: Սոցիալիզմի այդ հաջողության հիմքը հանդիսանում է ինդուստրացման քաղաքականությունը, ծանրաբարության բարձրացումը, արտադրության միջոցների արտադրության ծավալումը: Անցած ժամանակաշրջանում մեր ծանր արդյունաբերությունը կանգնեցված է ամուր վոտքերի վրա և դրանով իսկ ստեղծված ե սեփական բազա վողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտման համար, սոցիալիստական խոշոր մեքենայական ինդուստրիայի պատվանդան:

2) Գյուղատնտեսության առավարեղում տեղի յեռնեցել արմատական բեկում, վորն արտահայտվել ե նրանում, վոր գյուղի չքավոր և միջակ մասսաները վերջնական վշադարձ են կատարել դեպի սոցիալիզմը: Գյուղատնտեսության մեջ իշխող դիրքը գրավել են սոցիալիստական ձեմերը (կոլտնտեսությունները և խորհունտեսությունները):

Խորհրդային Միությունը մանր և մանրագույշն հողագործության յերկրից վերածվել եւ յերկրագնդի ամենախոշոր հողագործական յերկրի՝ կոլեկտիվացման, խորհրդային տրնտեսությունների ծավալման, մեքենայական տեխնիկայի լայն կիրառման հիման վրա։ Սոցիալիզմի այս հաղթությունը, վոր լուծում է պրոլետարական հեղափոխության ամենակարևոր խոշոր խնդիրը, ունի համաշխարհային պատմական նշանակություն։

3) Առաջին հսկամյակի սոցիալիստական շնարարության կարևորագույն արդյունքը հանդիսանում է կապիտալիզմի արմատների վերջնական արմատադրկումը գյուղում, վորը կանխորոշում է կապիտալիստական տարրերի վակատար վերացումը և դասակարգերի լրիվ փաչնչացումը: Սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտումը ԽՍՀՄ-ում նշանակում է, վոր լենինյան «վ—ում» հարցը լուծված երնդգեմ կապիտալիզմի և հոգութ սոցիալիզմի ամբողջությամբ և անդառնախորեն, քաղաքում թե գյուղում:

17-ըդ կուսկոնքերենցիան միաժամանակ տվեց առաջին հնգամյակում ավարտված սոցիալիզմի ֆունդամենտի հաստատ պատվանդանի վրա կառուցված սոցիալիզմի շենքի վիթխարի պլանը, ընդգծելով, վոր յերկրի ահազին բնական հարստությունները, սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերը, բանվորական-կոլտնտեսական լայն մասսաների աճող ակտիվությունն ու կուսակցության ճիշտ գիծը լիովին ապահովում են սոցիալիստական տնտեսության արտադրական ուժերի այնպիսի ծավալումը Հ-ըդ հնգամյակում, վորի հիման վրա վերջնականապես կվերացվեն կապիտալիստական տարրերը ԽՍՀՄ-ում։ Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում է կապիտալիստական տարրերի ու առհասարակ դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարրե-

բությունների ու շահագործում ճնող պատճառների լիակատար վոչնչացումը, կապիտալիզմի մնացորդների հաղթահրումն եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումն անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուցողներից:

Ինչպես Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև այժմ  
անցած 15 տարվա ճանապարհը, նույնպես և սոցիալիզմի  
կառուցման ուղին դասակարգային պայքարի ուղին ե,  
տարբեր ճակատամասերում և բնագավառներում, տարբեր  
տակտիկաներով ու մեթոդներով:

Այս տեսակետից կուսակցության 17-րդ կուսկոնքերն մարզս-լենինյան դիմալեկտիկայի կատարյալ պարզությամբ և հետևողականությամբ գծել ե մեր հետագա պայքարի ու հաղթանակների ուղին: «Բանվոր դասակարգը սոցիալիզմի նոր հաջողությունները կապահովի միայն պայքար մղելով կապիտալիզմի մնացորդների դեմ, անողոք հակահարված տալով կործանվող կապիտալիստական տարրերի դիմադրությանը, հաղթահարելով աշխատավորության մեջնկատվող բուրժուական ու մանր-բուրժուական նախապաշտումները, համառ աշխատանք կատարելով նրանց նց սոցիալիստական վերադաստիրակալմանհամար: Դա նշանակում է, վոր հետագայում ևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում, հատկապես առանձին շրջաններում ու սոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում, վորը դրա հետ մեկտեղ ընդգծում է աշխատավորության առանձին խավերի ու խմբերի մաս ու պետքանի առողջությունների մնալու,

գամ կուսակցության մեջ թափանցելու անխուսափելիությունը։ Այդ նկատառումով կուսակցության առաջ խնդիր ե դրվում ամբացնել պրոլետարական դիկտատորան և ել ավելի ծավալել պայքարն ընդդեմ ոպրոտունիզմի ու հատկապես աջ թէքման, իբրև տվյալ շրջանի գլխավոր վտանգի։

Այս բոլորը քաղաքական մարտական դիրեկտիմներ են սոցիալիզմի կառուցման ու դասակարգային պայքարի հետագա ետապի համար՝ դասակարգային ուժերի նոր հարաբերության ու կապիտալիստական ելեմենտների վրա մինչև վերջ շարունակվող գրոհի ու նրա դեմ ցույց տրվող դժմադրության նոր ձևերի ու տակտիկայի պայմաններում։

Հունվարյան պատմական պլենումը տալով կապիտալիստական տարրերի դեմ անցյալում մղվող կռվի հանրագումարները, միաժամանակ յերեան հանեց, քողազերծ արեց դասակարգային պայքարի ներկա մոմենտում ստացած նոր ձևերը, մատնանշեց այդ կռվի հանդուցային կետերը և առաջադրեց նոր իրադարձությունների պայմաններում շարունակվող դասակարգային պայքարի կազմակերպական նոր ձևերն ու մեթոդները։ Ծրագրային ու տակտիկական տեսակետից բացառիկ նշանակություն ու կարենություն ունի կուսակցության առաջնորդ ընկ Ստալինի ճառը, սոցիալիստական շինարարության ու դասակարգային պայքարի հետագա ժամանակաշրջանի հաջողությունների համար։ Մարքս-լենինյան քաղաքական այդ բացառիկ անալիզը վոչ միայն ինքնին ներկայացնում և թեորետիկական նվաճումների մի կլասիկ արժեք, այլ միաժամանակ անմիջական գործողության համար արժեքավոր ստրատեգիական ու տակտիկական ամբողջական պլան։

Առաջին հնգամյակի հաղթական բագաժով մենք հաստատ քայլերով զնում ենք դեպի անդասակարգ սոցիալիստական հասարակություն, մենք կառուցում ենք սոցիա-

լիզմի վիթխարի շենքը, խորտակելով կապիտալիզմի մնացող ուժերի բոլոր որհասական կատաղի դիմադրությունները։ Իրենց անտեսական դիրքերից գուրս շարուված, արտադրության միջոցներից սեփականազուրկ դարձած՝ քաղաքի ու գյուղի շահագործող դասակարգերի մնացորդները վերջնականապես ջախջախված, բայց դեռ լիովին չվոչնչացված դասակարգային գոյամարտի բաց դաշտում այժմ ստեղծված նոր իրադարձությունների պայմաններում, համառորեն շարունակում են իրենց դիմադրության, վասարաբության ու կազմալուծման աշխատանքները, նախընտրելով կռվի նոր, քողարկված ձևեր, ընդգրկելով ընդհատակյա պայքարի տակտիկան։ Նրանք դասակարգային վրեժինդրությամբ ու վայրագությամբ լցված աշխատում են, փորձում են քայքայել, կազմալուծել, թուլացնել խորհրդային իրավակարգի տնտեսական հիմքը, հանրային (սոցիալիստական) սեփականությունը, սոցիալիզմի տնտեսական սիստեմը, պատվանդանը։ Այս նպատակով նրանք բոլորովին չհրաժարվելով հանդերձ պայքարի հին զենքերից և մեթոդներից, աշխատում են թափանցել մեր սոցիալիստական արդյունաբերության ու առևտուրի որգանները (զալոդները, գործարանները, առևտուրական, մատակարարման և կոռպերատիվ ցանցը), առղոսկել սոցիալիստական գյուղատնտեսության մեջ, կոլտնտեսություններից և խորհանություններից ներս և ներքուստ քայքայել, կազմալուծել հանրային (սոց.) սեփականությունը և իրենց հափշտակելություններով, վասարաբություններով, սաբուտաժով, կոլտնտեսական ու բանվորական հետամնաց շերտերին պրովոկացիայի յենթարկելով իրենց գաղափարախոսական ազգեցության տակ ցցելով, նրանց միջոցով իրենց սոցիալական պատվերը կատարել տալով։ Վորոշ տեղերում դասակարգային թշնամուն նույնիսկ հաջողվում ե սողոսկել կուսակցության

մեջ, կուսակցական տոմսը գրպանում իր վնասարար մեքենայությունները, խարդավանանքներն ավելի հաջողությամբ կատարելու նպատակով:

Դասակարգային պայքարի ներկա առանձնահատուկ պայմաններում, ավելի քան վորևե ժամանակ, անհրաժեշտ են եղափոխական զգնություն, դասակարգային աչալլիքություն, դասակարգային թշնամու, առաջին հերթին կուլտության, ինչպես նաև բուրժուական այլասերման յենթարկված ամեն գույնի ու տեսակի պարագիտների (հացկատակների) և ժուլիկների դեմ խորհրդային իրավակարգի հիմքը հանդիսացող հանրային (սոցիալիստական) սեփականությունը պաշտպանելու համար:

Կապիտալիստական քայլային տարրերի դեմ սոցիալիստական գույքը, պրոլետարիատի ու աշխատավորության զոհողություններով ստեղծված ժողովրդական բարիքը պաշտպանելու մասին հեղափոխական զգնության վճռական խոսք ե ասել նաև կենինը.

«Հասկանալի յե, վոր հին հասարակության բոլոր քայլային եկեմնատներն անխուսափելիորեն բավական բազմաթիվ, գլխավորաբար կապված մանր բուրժուազիայի հետ, չեն կարող «իրենց ցույց չտար» այսպիսի խոր հեղաշրջման ժամանակ: Իսկ քայլային եկեմնատներն ուրիշ կերպ չեն կարող «իրենց ցույց տար», յեթե վոչ ավելացնելով հանցագործությունները, խուլիգանությունը, կաշառը, սպեկուլիացիան և ամեն տեսակ խայտառակություններ: Նրանց ուղղելու համար անհրաժեշտ է ժամանակ և յերկաթյա ձեռքուր»:

Մարքսիստական այս սպառիչ անալիզը պայքարի ու գործողության ամբողջական ու կոնկրետ մի ծրագիր ե պրոլետարիատի համար պատմական այն եպոխայում, յերբ նա կառուցում ե անդասակարգ սոցիալիստական հասարակություն, յերբ նա պատժիչ ու դաստիարակիչ մեթոդ-

ների գործադրումով պետք ե վերափոխի ամբողջ ազգաբնակության մտայնությունը, վերացնի կապիտալիզմից տիսուր ժառանգություն մնացած քայլայման, այլասերման, նեխման բոլոր մնացորդները մարդկանց դիտակցության ու կենցաղի մեջ: Ազգաբնակության բոլոր տարրերն աշխատավոր դարձնելու և ամբողջ աշխատավորությունը սոցիալիզմ կառուցող դիտակից ու անձնվեր մարտիկների վերածելու պատմական ամենաբարդ ու պատասխանատու միջուածն պրոլետարիատը կարող է կատարել միայն այն գեպօւմ, յերբ նա հեղափոխական զգնությամբ ու վճռականությամբ սրի պայքարը դասակարգային՝ կովկի բոլոր ճակատամասերում, ամրացնելով պրոլետարիատի դիկտատուրան, զորեղացնելով հեղափոխական որինականությունը:

«Խորհրդային իշխանությունը պազպատայա իշխանություն ե, հեղափոխական, հանդուգն, արագ շարժվող ու անխնանշելու համար կեղեկողներին, նույնպես և խուլիգաններին», ասել ե Լենինը: Սրանով սոցիալիստական շինարարության մեծ վարպետը տվել ե վոչ միայն սոցիալիզմի թշնամիների տարրեր կատեգորիաների քաղաքական դիագնոզը, այլ նաև պայքարի ու գործողության մեթոդները, ընդգծելով, վոր պրոլետարիատի դիկտատուրայի զորեղացման, խորհրդային իշխանության հանդուգն ու անխնանշերության, միջոցով միայն հնարավոր ե հաշիվ տեսնել դասակարգայնորեն թշնամի, անհարազատ, հակահասարական տարրերի հետ:

«Հարուստներ և ժուլիկներ, դրանք նույն մետալի յերկույթեաներն են, դրանք պարագիտների յերկու գլխավոր կատեգորիաներն են, վորոնք սպառում են կապիտալիզմի կողմից գործական ու դաստիարակության մեջ: Լենինի այս գրանք սոցիալիզմի գլխավոր թշնամիներն են: Լենինի պատգամն ամենաբարեքավոր ու գործնական մի ցուցմունք ե սոցիալիստական շինարարության, անդասակարգ հա-

սարակության բոլոր տեսակի թշնամիներին ճանաչելու և նրանց դեմ պայքարելու մասին այն պատմաշրջանում, ի երբ հեղափոխական պրոլետարիատը լծվել է Զ-րդ հսկամյակի քաղաքական ու տնտեսական վիթխարի խնդիրների լուծմանը։ Էնկ. Մոլոտովը ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հունվարյան նստաշրջանում իր գեկուցման մեջ սպառիչ պատասխան տվեց հետևյալ այժմեյական հարցին։ «Ի՞նչու սոցիալիստական տնտեսության կազմակերպման հարցերն այժմ հասուն ուշադրություն պետք է պահանջն իրոհրդային իշխանությունից։ Այս հարցի պատասխանը պարզ է և վորոշակի հատկապես այն պատճառով, վոր սոցիալիզմը հաղթանակեց, վոր մեր յերկրում սոցիալիստական ձևերը դարձել են անտեսության տիրապետությունը։ Տես Յեկը Յեկանից մենք համապատասխան յեղբակաց վթյուններ պետք ե անենք մեր ամբողջ գործնական աշխ ստանքների նկատմամբ։ Մենք արդեն անցյալ տարվա լեռներին մի ընդհանուր վճռական յեղբակացություն արևնք։ Այդ արտահայտված խորհրդային կառավարության այն գեկրետով, վորը վերաբերում է պետական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու կոռպերացիայի գույքի պահպանմանը և հանրային (սոցիալիստական) սեփականության ամրացմանը»։

Հանրային սեփականությունը, վոր անտեսական հիմքն է մեր իրավակարգի, ձեռք և բերված, կուտակված ու ամրացած այն անձնուրաց, համառ պայքարի ընթացքում և զոհողություններով, վոր հեղափոխությունից մինչև մեր որերը տարել ե հեղափոխական պրոլետարիատը կոմունիստական կուսակցության հմուտ դեկտության ներքո։ Հեղափոխության առաջնութացը, սոցիալիստական շնարարության բոլոր բնագավառներում ձեռք բերված աննախընթաց վաճառմանը, առաջին հսկամյակի հաջող կատարումը չորս

տարում արդյունք են այն հերոսական ճիգերի, այն հնտուգիազմի, վորով պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիության առաջավոր մասսաներն ամրապնդեցին անտեսության սոցիալիստական սիստեմը, ջախջախելով և վանելով կապիտալիստական տնտեսության ձևերը մեր ժողովրդական տնտեսության միջից, արթուն պահակ կանգնելով ժողովրդական բարիքին—հանրային սեփականության։ Դա այն բարիքն է, վոր շուտով պետք ե դառնա անդասակարգ սոցիալիստական հասարակության հարստությունը։ Այսպիսով սեփականությունն ինչպես ամեն մի հասարակակարգի, նույնպես և խորհրդային հասարակակարգի ամենաարմատական, ամենակենսական հարցն է։

Կուսակցության Զ-րդ համագումարում իր արտասահմած ճառում կենինը պատմական կլասիկ վերլուծումը տվեց այդ հարցին՝ ասելով, վոր Շնախինը բոլոր սահմանադրությունների, մինչև իսկ ամենահանրապետական, ամենադեմոկրատական սահմանադրության վոգին, հիմնական բովանդակությունը հանգում է միայն սեփականատիրության։ Յերբ դասակարգերը փոխարինում ենին իրար, նրանք փոխում ենին վերաբերմունքը գեպի սեփականությունը։ Բուրժուազիան փոխարինելով ֆեոդալիզմին, փոխեց իր վերաբերմունքը դեպի սեփականությունը»։

Հաղթական պրոլետարիատը նույնպես փոխեց իր վերաբերմունքը գեպի սեփականությունը։ Արտադրության միջոցների մասնավոր սեփականության սիստեմին հոկտեմբերյան հեղափոխությունը հակադրեց այդ միջոցների հանրային սեփականությունը, դարձնելով այդպիսին խորհրդային իրավակարգի հիմքը։ Այդ հիմքի պաշտպանության համար ե, վոր ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ժողովրդական կոմիսարների Խորհուրդը 1932 թ. ոգուտոսի 7-ին հրատարակեցին «Պետական ձեռնարկություն-

ների, կոլտնտեսությունների ու կոռպերացիայի գույքի պահպանման և հանրային սեփականության ամրացման մասին» քաղաքական բացառիկ նշանակություն ունեցող պատմական դեկրետը:

«ԽՍՀՄ-ի Կենտգործկոմն ու Ժողկոմիսորհը, —ասվում է հիշյալ դեկրետում, —գտնում են, վոր հանրային սեփականությունը (պետական, կոլտնտեսական, կոռպերատիվ) հանդիսանում ե խորհրդային իրավակարգի հիմքը, սրբազն և անձեռնմխելի յե այն, և այն մարդիկ, վորոնք խախտում են հանրային սեփականությունը, պետք ե ճանաչվեն վորպես ժողովրդի թշնամիներ, հետեւաբար վճռական կոիվը հանրային գույքի հափշտակիչների դեմ՝ հանդիսանում ե խորհրդային իշխանության մարմինների առաջնակարգ պարտականությունը:

Կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի կողմից ձևակերպված հիշյալ պատմական վորոշումն սկզբունքային պարզողությամբ ու ըոլցեկիւան վճռականությամբ դնում և լուծում ե յերկու հիմնական խնդիր. ա) այն, վոր հանրային սեփականություն ե համարվում վոչ միայն պետական, այլ նաև կոլտնտեսական ու կոռպերատիվ գույքը, քանի վոր թե կոլտնտեսությունը և թե կոռպերացիան հանդիսանում են տնտեսական կազմակերպման սոցիալիստական ձևեր և հետեւաբար նրանց սեփականությունը բաղկացուցիչ մասն ե կազմում խորհրդային իրավակարգի տնտեսական հիմքի, քանի վոր պետական, կոռպերատիվ ու կոլտնտեսական գույքը, վորպես հանրային սեփականություն, դառնալու յեն վաղվա անդասակարգ, սոցիալիստական հասարակության ընդհանուր բարիք, բ) այն, վոր հանրային գույքի հափշտակիչը ժողովրդի թշնամին ե, նրա գործունեյությունը հականդագիտական ակտ ե և հետեւաբար նա, վորպես սոցիալիզմի թշնամի, պետք ե պատժի խորհրդային իշխա-

նության որենքների բացառիկ խստությամբ, հատկապես այն պատմաշրջանում, յերբ մենք սոցիալիզմի հաղթական շենքն ենք կառուցում, իսկ հափշտակիչը, գողը փորձում ե, աշխատում ե քանդել, քայրայել, թուլացնել այդ վիթխարի շենքի հիմքը:

Հափշտակիչ, գողի սոցիալական վտանգավորության իր գնահատականը ավել և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը դեռ շատ տարիներ առաջ, 1926 թ. ապրիլի 13-ին կուսակցության Լենինգրադի կազմակերպության ակտիվի նիստում «Խորհրդային Սիության տնտեսական գրության մասին» արտասահմած իր պատմական ճառում. «Գողը, վոր հափշտակում ե ժողովրդական բարիքը և փորում ե ժողովրդական տնտեսության շահերի հիմքը, նույն լրտեսն ե և դավաճանը, յեթե վոչ ավելի վատթարը», ասել ե ընկ. Ստալինը, այդպիսով սկզբունքային սպառիչ հիմնավորում տալով հանրային սեփականության հափշտակությունների դեմ ամենավճռական ու ամենա կոիվ մզելու անհրաժեշտությանը:

Հանրային գույքը հափշտակիչներին, վորպես ժողովրդի թշնամիների, գնդականարելու անհրաժեշտության մասին մարտական, վճռական դիբեկտիվ ավել ե, շատ ավելի առաջ, չոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ Լենինը: Համառուսական կենտրոնական Գործադիր կոմիտեյում 29 ապրիլի 1918 թ. «Խորհրդային իշխանության ներթական խնդիրների մասին» արտասահմած իր ճառում Լենինը վերլուծելով նաև «կողոպտիր կողոպտածը» լոգունգը, ընդգծել ե, վոր այդ լոգունը մեզ մոտ ունի ճիշտ այն իմաստն ու բովանդակությունը, վորն ունի «եքսպրոպրիացիայի յենթարկիքը եքսպրոպրիատորներին» լոգունգը, և միաժամանակ ավելացրել ե, վոր պրոլետարական հեղափոխությունն ասում ե՝ «հաշվիր կողոպտածը և մի թույլ տա, վոր դես ու դես

քաշեն այն, իսկ յեթե ուղղակի կամ անուղղակի քաշող լինի, ապա դիսցիպլինայի այդպիսի խախտողներին գնդակահարիք...»:

Ինչպես յերևում ե Լենինի XI հավաքածուի մեջ հրատարակված հրապարազբի որագրից, Լենինը 1918 թվի հունվարին մշակման համար գրել է նաև №16 թեման հետյալ խորագրով. «Մահման պատիժ և գնդակահարություն գող կարմիր-գվարդիականներին»։ Այս թեմայի խորագրից իսկ յերևում ե այն հեղափոխական վճռականությունը, վորով պետք ե կուվել հանրային սեփականության հափշտակիչների դեմ։

Այս տեսակետից միանգամայն հետեւղական ու հասկանալի յե ղառնում ոգոստոսի Շի պատմական վորոշման այն կետը, վորով հանրային գույքի հափշտակիչների համար հիմնական սոցիալական պաշտպանության միջոցը սահմանված է գնդակահարություն ամբողջ գույքի գրավումով՝ հանցանքի մեղմացուցիչ հանգամանքների գոյության դեպքում միայն թույլ տալով բավականանալ 10 տարի աղատազրկումով։

Վորպեսղի պարզ ու հասկանալի լինի, թե ինչու հատկապես մեր սոցիալիստական շինարարության տվյալ ժամանակաշրջանում ավելի, քան վորեւ այլ ժամանակ, սուր և վճռական ձեռվ զրվեց հանրային սեփականության պաշտպանության խնդիրը, թե ինչու այդ պաշտպանությունն առաջադրվեց վորպես հեղափոխական որինականության ներկա ժամանակաշրջանի ամենահրատապ ու մարտական խնդիրը և այդ պաշտպանության որինսդրական ձևակերպումը հավերժացավ սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցի սանկցիալով, բավական ե հետեւ այն սպասիչ վերլուծմանը, վոր տվեց կուսակցության առաջնորդը ընկ. Ստալինը Համբ(ը)կ կե և կվշ-ի միացյալ պլե-

նումի 1933 թ. հունվարի նիստում «առաջին հսկամյակի արդյունքների» մասին իր տված պատմական զեկուցման վերջին մասում։

«Վորպես արդյունք հսկամյակի իրականացմանը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և առևտության ասպարեզներում, մենք ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում հաստատեցինք սոցիալիզմի սկզբունքը, գուրս հրելով այդտեղից կապիտալիստական տարրերը՝ ի՞նչ հետևանք պետք ե ունենար այդ կապիտալիստական տարրերի նկատմամբ և ի՞նչ հետևանք ունեցավ նա իրականում։ Դրա հետևանքը յեղակ այն, վոր իրենց հունից գուրս գցվեցին մեռնող դասակարգերի վերջին մնացորդները՝ արդյունաբերողները և նրանց սպասավորները՝ առևտրականները և նրանց մանկավիկները, նախկին ազնվականներն ու տերտերները, կուլակներն ու յենթակուլակները, նախկին սպիտակ սպաներն ու ուրյաղնիկները, նախկին վոստիկաններն ու ժանդարմները, շովինիստական հօգով համակված ամեն տեսակ բուրժուական ինտելիգենցիները և մյուս բոլոր հականորդային տարրերը։ Այդ նախկին մարդիկ գուրս գցված լինելով իրենց հունից և ցըմելով ամբողջ ԽՍՀՄ-ում, բուն դրին մեր գործարաններում, մեր հիմնարկություններում ու առևտրական կազմակերպություններում, յերկաթուղային և ջրային տրանսպորտի ձեռնարկություններում ու գրլիափորապես կոլտնտեսություններում և խորհրդային տընտեսություններում։ Բուն դրեցին և թագնվեցին այնտեղ, հագնելով «բանվորների» և «գյուղացիների» դիմակը, ընդ վորում նրանցից վոմանք խցկվեցին նույնիսկ կուսակցության մեջ։ Ի՞նչ բերին նրանք այնտեղ։ Ինարկե ատելության զգացմունք դեպի խորհրդային իշխանությունը, մոլեգին թըշնամության զգացմունք գեպի տնտեսության, կենցաղի և կուլտուրայի նոր ձևերը։

Այդ պարոններն այլևս անկարող են սւղղակի գրոհի դիմել խորհրդային իշխանության դեմ։ Նրանք և նրանց դասակարգերն արդեն մի քանի անգամ ուղղիսի գրահ տվել են, սակայն ջախջախվել ու ցըվել են։ Այդ պատճառով միակ բանը, վոր մնում են նրանց անել—վատության անել և մասսել բանվորներին, կոլտնտեսականներին, խորհրդային իշխանությանը և կուռակցությանը։ Յեկ նրանք վնասում են այնպես, ինչպես վոր միայն կարող են, գործելով գաղտնի կերպով։ Նրանք հրկիզում են պահեստները և կոտրում մեքենաները, կազմակերպում են սբուտաժ։ Վնասարարություն են կազմակերպում կոլտնտեսություններում և խորհրդային տնտեսություններում, ըստ վորում նրանցից մի քանիսը, վորոնց թվում կան պրոֆեսորներ, իրենց մասարարական վոգերությամբ այնտեղ են հասնում, վոր կոլտնտեսություններում և խորհրդային տնտեսություններում անասուններին ժանտախտ, սիրիրախտ են պատվաստում, նպաստում են մենինզիտի տարածմանը ձերի մեջ և այլն։ Սակայն դիմավորն այդ չի։ Այդ նախկին մարդկանց «գործունեյության» մեջ դիմավորն այն ե, վոր նրանք կազմակերպում են պետական գույքի, կոռպերատիվ գույքի, կոլտնտեսական սեփականության մասսայական գողություն ու հափշտակում։ Գողություն ու հափշտակություն գործարաններում, գողություն ու հափշտակում յերկաթուղային բեռների, գողություն ու հափշտակություն պահեստներում ու առևտրական ձեռնարկություններում, մասնավանդ գողություն ու հափշտակություն խորհրդային տընտեսություններում և կոլտնտեսություններում—ահա այդ նախկին մարդկանց «գործունեյության» հիմնական ձեր։ Նրանք կարծես դասակարգային բնագգով գորում են, վոր խորհրդային իրավակարգի հիմքն ե կազմում հանրային սեփականությունը, վոր պետք ե ցնցել հատկապես այդ հիմքը։

Խորհրդային իշխանությանը մնաս տալու համար, և նրանք իրոք աշխատում են ցնցել հանրային սեփականությունը, կազմակերպելով մասսայական գողություն ու հափշտակություն։ Նրանք վատնումներ կազմակերպելու համար ոգտագործում են կոլտնտեսականների, յերեկվա այդ մենատնտեսների և այսոր կոլտնտեսության անդամների մասնավոր սեփականատիրական սովորույթներն ու մնացորդները։ Դուք, վորպես մաքսիստներ, պետք ե գիտենաք, վոր մարդկանց գիտակցությունն իր զարգացումով հետ ե մնում նրանց փաստական դրությունից։ Կոլտնտեսականներն իրենց դրությամբ այլևս մենատնտեսներ չեն, այլ կոլեկտիվստներ, սակայն նրանց գիտակցությունն առայժմ դեռ հինն ե, մասնավոր սեփականատիրականը։ Յեկ ահա շահագործող դասակարգերի շահերից դուքս յեկած այդ նախկին մարդիկ ոգտագործում են կոլտնտեսականների մասնավոր սեփականատիրական սովորույթները, վորպեսզի կազմակերպեն հանրային գույքի գողություն և դրանով իսկ խախտեն խորհրդային իրավակարգի հիմքը՝ հանրային սեփականությունը։

«Յեթե կապիտալիստները մասնավոր սեփականությունը հայտարարեցին սրբազն ու անձեռնմխելի, ամրացնելով իր ժամանակին կապիտալիստական իրավակարգը, ապա մենք, կոմունիստներս, առավել ևս սրբազն ու անձեռնմխելի պետք ե հայտարարենք հանրային սեփականությունը, վորպեսզի դրանով իսկ ամրացնենք տնտեսության նոր, սոցիալիստական ձևերը արտադրության և առևտրի բոլոր բնագավառներում։ Թույլ տալ հանրային սեփականության գողացումն ու վատնումը՝ անկախ նրանից, թե իսկ վերաբերում ե արդյոք պետական սեփականության թե հանրային կոռպերատիվ և կոլտնտեսական սեփականության, և անցնել նման հականեղափոխական այլան-

դակությունների կողքով—նշանակում ենպաստել թուլացնելու խորհրդային իրավակարգը, վորը հենվում է հանրային սեփականության վրա, վորպես իր հիմքի վրա։ Դրանից եր յենում մեր խորհրդային կառավարությունը, յերբ նա վերջերս հրատարակեց հանրային սեփականության պահպանության որենքը։ Այդ որենքը ներկա մոմենտին հանդիսանում է հեղափոխական որինականության հիմքը, իսկ նրա խստիվ կենսագործման պարտականությունը, հանդիսանում է ամեն մի կոմունիստի, ամեն մի բանվորի ու կոլտնտեսականի ամենաառաջին պարտականությունը։ Մեր ժամանակվա հեղափոխական որինականությունն իր սուր ծայրով ուղղված է գողերի ու մասսարարների դեմ, խուլիզանների ու հանրային սեփականությունը գողացողների դեմ։ մեր ժամանակվա հեղափոխական որինականության գլխավոր հոգուն և պահպանել հանրային սեփականությունը և վոչ թե ուրիշ բան։ Ահա թե ինչու պայքարել հանրային սեփականության համար, պայքարել խորհրդային իշխանության որենքների համաձայն մեղ տրամադրված բոլոր միջոցներով և յեղանակներով, դա կուսակցության հիմնական խնդիրներից մեկն ե։ Պրոլետարիատի ուժեղ ու հզոր դիկտատուրա—ահա թե ինչ պետք է մեզ այժմ, վորպեսզի մենք ջարդուիշուր անենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները և ջախջախենք նրանց գողունի մեքենայությունները...»։

Ահա թե ինչպես ե դրված հարցը։ Ահա թե ինչն ե քաղաքական պատմական իմաստը ոգոստուի 7-ի բացառիկ որենքի։ Պետք ե ընդգծել սակայն, վոր հանրային սեփականության պահպանության համար անհրաժեշտ պայքարն անհամեմատ ավելի բարդ է, քան գասակարգային թշնամուգեմ բաց դաշտում մզգող կոիվր։ Հանրային սեփականության պաշտպանության համար, հանրային դույրի հափրշ-

տակումն ու վատնումը կանխելու համար անհրաժեշտ ե գործնականություն, հաշվառում ու վերահսկողություն և հատկապես հեղափոխական զգնություն ու անողոքություն, վորպեսզի ինչ դիմակ ել վոր հագնի դասակարգային թշնամին, գողը, հափշտակիչը, հսարավոր լինի նրան քողազերծ անել և խարանել շիկացած յերկաթով։

Վորոնց դեմ, հանցագործների ի՞նչ կատեգորիաների դեմ և ուղղված Խորհրդային Միության կառավարության ոգոստուի 7-ի բացառիկ որենքի կրակը.—

ա. Դասակարգային թշնամու, հականեղափոխականի դեմ, վոր նպատակ դնելով քայքայելու մնը իրավակարգի արևտեսական հիմքը, վերականգնել կապիտալիստների և կալվածատերների իշխանությունը, մեր արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում կազմակերպումե վնասարարություն պայթեցման, հրկիզման, ներմուծվող թանգարժեք սարքավորումների փչացման և նման դավադրական ակտերի միջոցով։

Վերջին մի շարք տարիների ընթացքում հականեղափոխական կազմակերպությունների վերաբերյալ տեղի ունեցած դատական պրոցեսները միանգամայն լույս սփոյեցին ջախջախված, բայց բոլորովին դեռ չփոխացված դասակարգային թշնամու վնասարարության, դիվերսիոն փորձերի այդ գործելակերպի վրա։

Յերկրորդ կատեգորիան համատարած կոլեկտիվացման հիման վրա վորպես դասակարգ վերացված, ապակուղակացված կուլակությունն ե, ներքին ու արտաքին հականեղափոխության այդ վերջին հենարանը, վորը սոցիալիստական ուելսերի վրա վերակառուցվող գյուղում անդառնալիորեն կորցնելով վրա վերակառուցվող գյուղում անդառնալիորեն կամ անկազմակերպ աշխատում քայքայել սոցիալիստական գյուղականությունները և խորհրդային սուստեսությունները—կոլտնտեսությունները և խորհրդային սուստեսությունները; Կուլակի վնասարարության նոր տակ-

ոիկայի վրա լույս սփռեց կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի պատմական այն ճառը, վորնա արտասահնեց կենտրոնի և Կվէշի հունվարյան պլենումում գյուղի աշխատանքների մասին։ Շարունակելով հանդերձ կոլտնտեսությունների դեմ դրսից իր պայքարը, կուլակը և նրա սոցիալական պատվերը կատարող յենթակուլակը նախընտրում են սողոսկել կոլտնտեսություններից ներս, տեղափորվել դեկավար ապարատում և ներքուստ քայլայել, կազմականածել կոլտնտեսությունը։ Նրանց պայքարի, վասարարության այս նոր, գերակշռող տակտիկան ավելի քան վաճագագոր ե, քանի վոր նրանք արտաքուստ հագնում են աշխատավոր գյուղացու դիմակը և այդ կարթով վարում կոլտնտեսությունների անդիտակից, հետամնաց տարրերին, նրանց միջոցով հափշտակում, վատնում կոլտնտեսական արտադրության հանրային հիմքը, տնտեսապես քայլայում և թուլացնում սոցիալիստական տնտեսության այդ գերակշռող ձեր։ Կոլտնտեսությունների մեջ խցկած կուրակները և բոլոր վասարարները փորձում են իրենց հականեղափոխական նպատակի իրագործման համար ոգտագործել կոլտնտեսականների մասնավոր սեփականատիրական ձգությունների, արագիցիանների մնացորդները, նրանք ոգտագործում են հատկապես այն լողբերին և ձրիակերներին, վորոնք կոլտնտեսական գույքը համարում են գողության որյեկտ։ Կոլտնտեսություններում սողոսկած դասակարգային թշնամինները, կուլակները և յենթակուլակները հատուկ ձգություն ունեն տեղափորվելու հաշվառման պաշտոններում, վորպեսզի քառային դրության հասցնելով հաշվառումն ու հաշվապահությունը, ավելի հաջող կերպով կարողանան կազմակերպել հափշտակումներ և վատնության որյեկտ միաժամանակ մթերումների գծով և այդպիսով միաժամանակ կրկնակի հարված հասցնել խորհրդային

պետությանը, թուլացնելով, քայլայելով նրա տնտեսական հիմքը՝ հանրային սեփականությունը։

Յերբորդ կատեգորիան պետական կոռպերատիվ-առետրական, մատակարարման ապարատում սողոսկած ամեն տեսակ «նախկին» մարդիկ են, վորոնց քաղաքական գիզիոնումիայի և հականեղափոխական-վասարարական գործունեյության վարագույրն այնքան հաջող կերպով պատռեց ընկ. Ստալինը հունվարյան պլենումում տված իր զեկուցման ժամանակ։ Այս կատեգորիային են պատկանում ջախախվածքությունները, նեպմանները, սպեկուլյանատիչները, նախկինները, սպիտակ սպանները և չինովիկները, բուրժուական լիդերովիայի բոլոր ներկայացուցիչները և բուրժուական լիդերովիայի բոլոր ներկայացուցիչները և այլն, վորոնք բուն զնելով մեր պետական հիմնարկությունները և այլն, վորոնք բուն զնելով մեր պետական հիմնարկություններում ու կազմաներում, տնտեսական ձեռնարկություններում և ոգտվելով զեկավարկերպություններում, արանսպարտում և ոգտվելով զեկավարկերպությունների բարեհոգությունից կամ հանցավոր ների, տնտեսվարների բարեհոգությունից կամ հանցավոր ների, տնտեսվարների բարեհոգությունից կամ հանցավոր ների, անփիսով թուլացներ, արգելակել մեր սոցիալիստական տընտեսության հաղթական ընթացքը։

Չորրորդ կատեգորիան ամեն տեսակ ապադասակարգային ելեմենտները, հասարակության տականքներն են (բանդիտներ, գողեր, խուլիզաններ, ժուլիկներ և այլն), վորոնք կազմակերպում են թալան, հափշտակություն, գողություն՝ գործարաններից, յերկաթուղուց, առևտրական ու կոռպերատիվ ծարաններից, խանութներից, Գլխավորաբար տեղափորված պահեստներից, խանութներից, հաշվին հետզհետե քաղաքում և ապակուլակացվածների հաշվին հետզհետե քաղաքում և առաջարկությունուղ այս կատեգորիայի չարագործելունց շարքերն ստվարացնող այս կատեգորիայի ժամանակամբ ժամանակին իր զայրութիւն և դատապարների նկատմամբ ժամանակին իր զայրութիւն և դատապարներին խոսքն ե ասել լենինը, ընդգծելով, վոր «բուրժության խոսքն ե ասել լենինը, ընդգծելով, վոր «բուր-

Ժուաներ և ժուլիկներ—միւսույն զետաղի տարբեր յերեսներն են»:

Հինգերորդ կատեգորիան աշխատավորության այն հետամնաց, անգիտակից տարրերն են, վորոնք բուրժուական այլասերման յենթարկված, մանր-բուրժուական տրադիցիաներից բոլորովին չազատագրված՝ յուրացնում, վատնում, գողանում են հանրային բարիքը, վորոնք շարունակում են իրագործել հայտնի ասացվածքը՝ «մի մեծ պատառ պօկիր ու փակակո»:

Վեցերորդ կատեգորիան այն տնտեսավարներն են, զորոնք իրենց ակներև անփուլթ վերաբերմունքով հեշտացնում; Դյուրացնում են հանրային գույքի հափշտակումն ու վատնումը:

Ահա այս վեց կատեգորիայի սոցիալապես վտանգավոր ելեմենտները, վորոնց դեմ վճռական ձևով ուղղված պետք է լինի հեղափոխական որինականության կրակը, ԽՍՀՄ-ի կառավարության 1932 թ. ոգոստոսի 7-ի վորոշման սանկցիայով:

Բացի վերոհիշյալ կատեգորիաների հանցագործներից, վորոնք հափշտակում ու վատնում են հանրային (պետական, կոռպերատիվ ու կոլտնտեսական) գույքը կամ նման հափշտակման համար նպաստավոր պայմաններ են ստեղծում, ոգոստոսի 7-ի բացառիկ որենքիներգործության տակ ընկնում են նաև այն հականասարակական կուլակային կապիտալիստական տարրերը, վորոնք բռնություն և սպառնալիք են գործ դնում կամ նման բռնության ու սպառնալիքի գրդում կոլտնտեսականներին՝ նպատակ ունենալով նրանց պարտադրել հեռանալ կոլտնտեսություններից ու այդպիսով կազմալուծել քայրայել վերջինները։ Այս կատեգորիաների հանցագործությունների նկատմամբ որենքը սահմանում է 5-ից 10 տարի ժամանակով ազատազրկում կոնցենտրացիոն լագերներում։ Այս վերջին կատեգորիայի

հանցագործության դեմ դատական պայքարի ու ռեպրեսիայի այս խստության և այդպիսի ռեպրեսիան ոգոստոսի 7-ի պատմական բացառիկ վորոշումով նախատեսելու նպատակն է կազմակերպորեն և տնտեսապես ամրապնդել կոլտնտեսությանները, վորպես սոցիալիստական գյուղատնտեսության հիմնական, գերակշռող ձեր:

Տարակույս չկա, վոր ոգոստոսի 7-ի բացառիկ վորոշման խստությունն առաջին հերթին և գլխավորապես ուղղված ե դասակարգային թշնամու, զախշաված, բայց դեռ լիովին չփոխչացված կուլակության դեմ, վորը վորպես վերջին կապիտալիստական դասակարգը մեր յերկրում հանդիսանում ե ներքին ու արտաքին հակառակության հիմնական հենարանը և վոր զգալով իր մոտալուտ մահը, իր վերջին ուժերը մոբիլիզացիայի յերենթարկում, պայքարի և վասարարության նորանոր մեթոդներ ե ընտրում՝ դասակարգային վերեմունքության և մոլեգնության իր որհասական հարվածը հասցնելու համար սոցիալիզմը կառուցող մեր յերկրին, նրա տնտեսական հիմքին։ Հականեղափոխական հանցագործների հատկապես այս կատեգորիայի դեմ կռվի ֆրոնտի վրա յե, վոր դարձնում ե մեր ուշադրությունն ընկ. Ստալինը իր այն պատգամով, վոր ներկայումս հեղափոխական որինականության սուր ծայրն ուղղված պետք ելինի գողերի ու վասարաբների, խուլիգանների ու հանրային սեփականությունը գողացողների դեմ։

Նկատի առնելով այն հանգամանքը, վոր օմեր ժամանակի հեղափոխական որինականության զվարար հոգաց հանրային սեփականության պահպանությունն ե», հարց ե ծագում, թե ինչ ձևով և ինչ միջոցներով՝ աշխատանքի ու պայքարի ինչ մեթոդներով ե հսկագոր հաջողությամբ պաշտպանել հանրային սեփականությունը, սոցիալական

բոլոր շերտերի ու հանցագործների բոլոր կատեգորիաների հավաքակումից, վասնումից:

Սոցիալիստական գույքի պահպանման յերկու հիմնական միջոցներ կան. դրանցից առաջինը պրոֆիլակտիկ (կանխող) ձեռնարկումներն են և յերկրորդը՝ համապատասխան դատական ուժապեսիան: Հետևաբար հանրային սեփականության պահպանության համար մղվող պայքարը, ֆասարության դեմ մղվող պայքարը բոլոր որդաններից և կազմակերպություններից պահանջում ե հեղափոխական դգունություն և աշալըջություն, պահանջում ե կոնկրետ, սպերատիվ ղեկավարությամբ ամրացնել և ապահովել սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերը: Ինքնին հասկանալի յե, վոր այնտեղ, վորտեղ ղեկավարները, հատկապես տնտեսավարները չեն տիրապետում իրենց գործին, այնտեղ, վորտեղ ապարատում տեղ են գտնում, նույն իսկ հովանափորվում, «Նախկին մարդիկ», այնտեղ, վորտեղ չկա ճիշտ հաշվառում ու իրական վերահսկողություն, վորտեղ պահեստները, խանութները և ձեռնարկությունները հատուկ պաշտպանության ու պահպանության տակ չեն առևլվում, այնտեղ հեշտանում ե գողի, ֆասարարի, հափրշտակչի սև գործը: Աշխատանքի ճիշտ կազմակերպումը մեր ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում և սղակներում, ղեկավարության սիստեմը, կազմերի ընտրության մեջ զգուշագործություն և պահանջկոտություն, հաշվապահության, ուելիությայի և մասսայական կոնտրոլի լավ դրվածքն այն հիմնական պրոֆիլակտիկ ձեռնարկումներն են, վորոնց գլխավոր գեր և վերապահված հանրային սեփականության պահպանության համար մակար առաջարկ:

թե ինչպիսի վճռական նշանակություն եր տալիս Անհնը պրոֆիլակտիկ ձեռնարկումներին, հատկապես հաշվառման և վերահսկողության գործին, յերևում ե «Ինչպես

կազմակերպել մբցությունը՝ հոդվածից, վորը գետեղված է 27 հատորում։

«Բանվորներ և գյուղացիներ, աշխատավորներ և շահագործվողներ, հողը, բանկերը, գործարանները գարձան ամբողջ ժողովրդի սեփականությունն էնքներդ ձեռնամուխ յեղեք արտադրության և մթերքների բաշխման հաշվառմանն ու վերահսկողությանը։ Այդ ե, և միայն այդ ե սոցիալիզմի հաղթանակի ուղին, նրա հաղթանակի գրավականը, ամեն տեսակ շահագործման, ամեն տեսակ կարիքի ու աղքատության վրա հաղթանակ տանելու գրավականը։ Ուստանանք հացը, յերկաթը, անտառը, բուրդը, բամբակը և վուշը հերիք ե բոլորիս, միայն թե համաժողովրդական գործարար, գործնական վերահսկողություն սահմանվի նրանց բաշխման վրա, միայն թե հաղթանակ տանենք ժողովրդի թշնամիների, հարուստների և նրանց պնակալեզների, ապահարանների վոչ միայն քաղաքականության, այլև ամենաուշ տնտեսական կյանքի վրա։

Վոչ մի ներողամտություն ժողովրդի այս թշնամիներին, սոցիալիզմի թշնամիներին, աշխատավորների թշնամիներին և կյանքի ու մահվան պատերազմ հարուստներին և նրանց պնակալեզներին՝ բուրժուական լինտելիզենտներին, պատերազմ խարերաներին, պորտաբույծներին և խուլգաններին։ Հարուստները և խարերաները միևնույն դրամի յերկու յերեսներն են, նրանք կապիտալիզմի մնած մակաբույծների յերկու գլխավոր խմբերն են, նրանք սոցիալիզմի գլխավոր թշնամիներն են։ Այդ թշնամիներին պետք և վերջնել ամբողջ ազգաբնակության հատուկ հակողության տակ, նրանց հետ անողոջաբար դատաստան տեսնել, յեթե նրանք գեթ նվազագույն չափով խախտեն սոցիալիստական հասարակության կանոններն ու որենքները։ Այդ ուղղությամբ ամեն մի թուլություն, ամեն մի տատանում, ամեն մի փափ-

կահոգություն մեծագույն հանցագործությունը կլիներ սոցալիզմի հանգեցք»:

Ի՞նչ ե հետեւում սրանից. այն, վոր հանրային սեփականության պաշտպանության խնդիրն առաջին հերթին պետք ե լինի բանվորների, կոլտնտեսական, աշխատավորական լայն մասսաների հիմնական ամենորյա մտահոգության խնդիրը, նրանց պայքարի, նրանց հեղափոխական գոռնության հիմնական որյեկտը: Մինչև վոր սոցիալիզմը կառուցող մասսաները լիովին չընդունեն և չարժեքավորեն ոգոստոսի Դ-ի պատմական վորոշման բացառիկ քաղաքական նշանակությունը՝ դասակարգային թշնամունացորդների վրա տարվող գրոհը մինչի վերջը շարունակելու, նրա գործնական, կենսական կարևորությունն իրենց զոհություններով ու ենտուղիազմով ձեռք բերված ժողովրդական բարիքները պահպանելու տեսակետից, միայն հեղափոխական որինականության որդանների ջանքերով ու պայքարով վոչ մի դեպքում հնարավոր չի լինի լիովին ապահովել սոցիալիստական պաշտպանությունը:

Թե ինչ հսկայական դեր ե վերապահել լենինը մասներին հափշտակությունների ու գողությունների դեմ պայքարի ասպարեզում, յերեւում ե նրա հետևյալ խոսքերից:

«Անհրաժեշտ ե ծավալել լայն բացատրական աշխատանք բոլոր կատեգորիաների աշխատավորների մեջ և նրանց մորթիզացիայի յենթարկել պայքարելու գողության ու հափշտակության դեմ, վոր այսորվա պայմաններում հանդիսանում ե դասակարգային պայքարի հատուկ մի ձեռի: Մեծ պարտականություն ե ընկնում այս ուղղությամբ պլոտեսիոնալ կազմակերպությունների վրա: Վոչ մի ըովէ չպետք ե մոռանալ, վոր մեր սոցիալիստական ձեռնարկություններում ևս թափանցում ե դասակարգային թշնամին—կու-

լակը, առևտրականը, ապարասակարգայնացած ելեմենտը՝ նա վորձում ե կաղմալուծել արտադրությունը, բանվորների հետամաց խավերի վրա քայլայիչ ազդեցություն գործ դնել: Անհրաժեշտ ե մերկացնել յուրաքանչյուր նման վործ, գովողության յուրաքանչյուր դեպք, աշխատանքային կարգապահության խախտման յուրաքանչյուր դեպք, մասնբուրժուական թափթվածության յուրաքանչյուր արտահայտություն, մղելով ամենորյա սիստեմատիկ և, վոր գլխավորն ե, կոնկրետ պայքար բանվորների այն խմբակների ու շերտերի դեմ, վորոնք համառորեն կառչած են մնում տրադիցիաներին, կապիտալիզմի ունակություններին և շարունակում են Խորհրդային պետության վրա նայել ըստ առաջնույն՝ տալ նրան վորքան կարելի յե քիչ աշխատանք և պոկել նրանից վորքան կարելի յե շատ փող»:

Զգեսք ե մոռանալ, վոր դասակարգային թշնամին, վորը հաջողությամբ խցկվել ե մեր սոցիալիստական տնտեսության մեջ, կոլտնտեսություններում, խորհանտեսություններում, արդյունաբերական ձեռնարկություններում, կոռպակատիվ-մասակարարման ցանցում, սոցիալիստական շինարարության դեմ իր մղած ակնհայտ թե քողարկյալ պայքարում վորձում ե այս կամ այն չափով ոգտագործել կոլտնտեսականներին, բանվորության վոչ-գիտակից, հետամաց խավերի, բուրժուական գաղափարախոսության ազդեցությունից դեռ բոլորվին չաղատազրված աշխատադիր մասնավոր սեփականատիրական ձգտությունը, հին կուների առաջնականությունը: Դասակարգային թշնամինները կենցաղի տրադիցիաները: Դասակարգային թշնամինները հատկապես ընդհանուր լեզու յեն դանում լողբերի, ձրիակերների, պարագիտային ելեմենտների հետ, վորոնք համակերների, պարագիտային ելեմենտների համարային գույքը, կոլտնտեսական, կոռպակատիվ, ոլետական բայցին գույքը, կոլտնտեսական, կոռպակատիվ, ոլետական բայցին գողության առարկա: Նրանք, հասագույքը համարում են գողության առարկա: Նրանք, հասա-

բակության այդ տականքները, կապիտալիստական գա-  
սակարգերի այդ մնացորդները հաճախ ոգտվում են նաև  
ղեկավարների, տնտեսավարների բարեհոգությունից, նրանց  
ոպորտունիստական ներողամառներից, դասակարգային  
զգաստության թուլությունից կամ բացակայությունից:  
Ա

Այս բոլորից պարզ ե դառնում այն հանգամանքը, վոր հանրային սեփականության պահպանության խնդիրը պետք ե դառնա մասսաների, առաջին հերթին բանվորների ու կոլտնտեսականների մտահոգության ու պայքարի հիմնական առարկան:

ԹԵ ՎՈՐՁԱՆ Ե ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԻՔԻ պահանության գործն այն դեպքում, յերբ հասարակությունը, յերբ մասսաներն անհրաժեշտ զգոնություն չունեն, յերբ բժանում ե դասակարգային գիտակցությունը, պարզ յերկում ե այն հանճարեղ անալիզից, վոր տվել ե ընկեր Ստալինը Լենինը գրագի կուսկազմակերպության ակտիվի նիստում «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին» 1926 թ. ապրիլի 13-ին տված զեկուցման մեջ (աևս «Պրավդայի» 18-ին ապրիլի 1926 թ. համարը):

«Մեզ անհրաժեշտ ե սիստեմատիկ պայքար մղել գության, այսպես կոչված «զվարթ» գողության դեմ մեր պետության ռրդաններում, կոռպերացիայի, պլոֆմիությունների և այլնի մեջ։ Կա ամոթալի, քողարկյալ գողություն, կա նաև հանդուզն, «զվարթ» գողություն, ինչպես ասում ե մամուլը։ Մոտերս յես «Կոմսոմոլսկայա պրավդայում» կարգացի ընկ. Ակունեվայի նշումները «զվարթ» գողության մասին։ Յեղել ե մի վոմն ֆերթիկ, բեղավոր մի յերիտասարդ, վոր զվարթորեն գողանալիս ե յեղել մեր հիմնարկություններից մեկում, գողացել ե սիստեմատիկաբար, անընդհատ և միշտ ել հաջող կերպով ե գողացել։ Տվյալ դեպքում ուշադրության արժանի յե վոչ այսքան ինքը գողը, փորքան

այն փաստը, վոր շրջապատող հասարակությունն իմանալով այդ գողի մասին, վոչ միայն չի պայքարել նրա դեմ, այլ, ընդհակառակը, գեմ չի յեղել նրան ուսերից փայփայելու և գովասանելու նրան իր ճարպկության համար, վորի հետեւանքով գողը հասարակության աջում դարձավ յաւրատեսակ մի հերոս։ Ահա թե ինչն ե ուշադրության արժանի և ահա թե ինչն ե վտանգավորը, ընկերներ։ Յերբ բոնում են լրտեսին կամ դավաճանին, հասարակության զայրույթը սահման չունի, նա պահանջում ե գնդակահարություն։ Իսկ յերբ գողը բոլորի աշքի առաջ կազմակերպում ե պետական բարիքի հափշտակությունը, շրջապատող հասարակությունը բավականանում ե բարեմիտ ժպիտով և գողի ուսերը փայփայելով։ Մինչդեռ պարզ ե, վոր այն գողը, վոր ժողովրդական բարիքը հափշտակում ե և ժողովրդական տնտեսության տակը փորում, միևնույն լրտեսն ե և դավաճանը, յեթե վոչ ավելի վատթարը։ Անշուշտ վերջին վերջո այդ բեղիկավոր ֆերթիկին կալանավորեցին։ Բայց ինչ ե նշանակում մի զվարթ գողի կալանավորումը։ Նման հարյուրավոր ու հազարավոր գողեր կան մեզ մոտ։ Բոլորին չես վոչնչացնի Պետքաղվարչության միջոցով։ Այստեղ պետք ե այլ միջոց, ավելի իրական ու ավելի լուրջ։ Այդ միջոցն այն ե, վոր նման գողերի շուրջն ստեղծվի շրջապատող հասարակության ընդհանուր բարոյական բոյկոտի և ատելության մթնոլորտը։ Այդ միջոցն այն ե, վոր այնպիսի կամպանիա կազմակերպվի բանվորների ու գյուղացիների մեջ, այնպիսի բարոյական մթնոլորտ ստեղծվի, վոր վերացնի գողության հնարավորությունը, վորն անհնար դարձնի ժողովրդական բարիքի զվարթ թե վոչ զվարթ գողերի ու հափշտակիչների կյանքն ու գոյությունը։ Գողության դեմ պայքարը, վորպես մեր կուտակումները հափշտակումից պահպանելու միջոցներից մեկը, նման խնդիր ե»։

1926 թվին՝ տրված այս հմուտ անալիզը, պայքարի այս դիրեկտիվը պահում է իր ամբողջ թարմությունը, իր վճռական նշանակությունը նաև այժմ, վորակս հանրային (սոցիալիստական) գույքի պահպանության ամենազործնական, երական, մասսայական միջոցը:

Հանրային սեփականության պահպանության մասսայական-հասարակական մի այլ խոշոր գործոնը մասսաների վերաբերմունքն ե դեպի աշխատանքը, դեպի արտադրությունը: Սոցիալիստական հարաբերությունների զարգացումը, սոցիալիզմի հաղթանակը կապիտալիզմի վրա վոչ միայն ապահովում ե արտադրական ուժերի արագ, աննախընթաց զարգացումը, տեմպը, այլև մարդկանց բնության արժատական վերափոխումը:

Լենինը սոցիալիզմը բնորոշեց «վորպես քաղաքակը թժած կոոպերատորների կառուցվածք, յերբ գոյություն ունի արտադրության միջոցների հանրային սեփականություն, յերբ պլուկտարիատը դասակարգային հաղթանակ և տարել բուրժուազիայի վրա»: Սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամենտի կառուցման ավարտումով թե քաղաքում և թե պատրում արտադրության հիմնական միջոցները հանրայժնացված են, թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության բնագավառում վերջնականացես և անդառնալիութեն լուծված և «ով ում»-ի պատմական հարցը հոգուտ սոցիալիզմի: Բայց դեռ անմիջական արտադրունքների լայն մասսաները չեն դարձել «այն քաղաքակը թված կոոպերատորները», վորոնց մասին ասել ե լենինը: Նրանք դեռ վերջնականացես ու ամբողջովին չեն վերադաստիարակված աշխատանքի սոցիալիստական կոոպերացիայի սկզբունքներով, նրանք դեռ չեն վերածված սոցիալիզմ կերտող դիտակից և անձնվեր կառուցողների: Այնուամենայնիվ, այն պատմական ժամանակաշրջանը, վորի մեջ ապրում ենք մենք բնու-

րոշ ե հենց այն սոցիալ-տնտեսական պրոցեսներով, վորոնցով պայմանավորված ե մասսաների կոմունիստական վերադաստիարակման քաղաքական պրոբլեմի շուտափությթ լուծումը:

Այն նշանակալից փաստը, վոր Բ. հնգամյակը թեակոնելիս բանվորական-աշխատավորական մասսաներից մոտ 5 միլիոն հարվածայիններ սոցիալիստական ենտուզիազմով լծվել են սոցիալիզմի կառուցման վեհ գործին և իրենց խանդավառությամբն ու աշխատանքի սոցիալիստական նոր, բարձր մեթոդներով խանդավառում, վարակում են մասցածներին, ինքնին յերաշխիք ե, վոր հաջողությունն ապահովված ե նաև դասակարգային պայքարի այս ճակատամասում—կապիտալիզմի մասցորդների լիկվիդացիան վոչ միայն եկոնոմիկայում, այլև մարդկանց գիտակցության, կենցաղի մեջ:

Հարվածայնության շարժման պատմությունը նորի կոիզը ե հնի դեմ, պատմական այն կոիզը, վոր առաջավոր բանվորները կոմունիստական կուսակցության դեկավարությամբ տարել են կապիտալիզմից ժառանգություն մնացած բոլոր հիվանդազին, հականասարակական յերեսությունների դեմ, հանուն նոր, սոցիալիստական վերաբերմունքի դեպի աշխատանքը, հանուն նոր, սոցիալիստական աշխատանքային կարգապահության:

Այս տեսակետից նոր դիսցիպլինայի համար մղվող պայքարը, պլուկտարիատի դիկտատուրայի ժամանակ, դասակարգային կովի հիմնական ձեերից մեկն ե հանդիսանում: Դասակարգային պայքարի այդ ձեը նույնպես հատուկ նշանակություն ե ստանում սոցիալիզմի կառուցման ներկա ետապում: Մոտ չորս տարվա սոցիալիստական հարավածայնության արդյունքները զալիս են վերջնականացես համոզելու և հաստատելու, վոր հարվածայնությունը վորպես

սոցիալիստական աշխատանքի մեթոդ, վորպես սոցիալիստական հարաբերության ձև՝ բարձրացել ե մի նոր մակարդակի վրա, ծնում է նոր արտադրական ուժ, արթնացնում ե ու կյանքի կոչում ստեղծագործական նոր ուժեր, վորոնք թագնված են սոցիալիստական արտադրության խորքերում:

Այս տեսակետից կատարելապես իրավացի յեր 17-րդ կուսկոնքերենցիան, վոր սոցմըցումը և հարվածայնությունը գնահատեց վորպես «գժվարությունները հաղթահարելու և սոցիալիստական շինարարության տեմպերն արագացնելու հիմնական աղբյուրը»:

Աշխատանքի սոցիալիստական ձևերը հիմա դարձել են նաև կոլտնտեսական գյուղացիության առաջավոր մասի աշխատանքի մեթոդները: Ծնունդ առնելով նյութական արտադրության շրջանակում, սոցիալիստական այդ մեթոդները տարածվում են նաև այսպես ասած «հոգեկան արտադրության մեջ», մարդկանց զիտակցության, հոգեբանության մեջ: Աշխատանքի հասարակական սլրոցեսի մեջ առաջացած այդ նորն արդեն թափանցում ե նաև կենցաղի մեջ, քայլայելով հին կենցաղային հասկացողությունները և ունակությունները և ստեղծելով նոր կենցաղային հարաբերություններ:

Ի՞նչն ե կարևորը:

Կարևորը հենց այն ե, վոր աշխատանքի սոցիալիստական ձևերի մեջ ընդգրկվեն սոցիալիզմը կառուցող բոլոր մասսաները քաղաքում թե գյուղում, վոր աշխատանքային սոցիալիստական կարգապահությունն ամրապնդվի վորակալեկ և ծավալի, վոր բանվորների ու գյուղացիների ստեղծագործական ուժերը, կազմակերպչական ունակությունները նոր ծավալ, նոր թափ ստանան ու կազմակերպութեն արմատանան:

Այդ տեսակետից բացառիկ նշանակություն ու կարելություն ունի ԽՍՀՄ-ի կենտրոնական Գործադիր կո-

միտեյի և Ժողովրդական կոմիսարների Խորհրդի «առանց հարգելի պատճառի պարապուրդի համար արձակելու մասին» հրատարակած՝ 1932 թ. նոյեմբերի 15-ի վորոշումը, վորը լույս տեսավ պատմական այն ժամանակաշրջանում, յերբ մեր յերկրում գործադրկությունն իսպառ վերացվել ե և հետեաբար առանց հարգելի պատճառի տեղի ունեցած պարապուրդն ավելի քան վորեե ժամանակ զգալապես պատառում ե մեր արտադրության ընթացքը և վասում աշխատավորության կոլեկտիվ շահերին:

«Աշխատանքի արտադրողականությունն, — ասել ե Լենինը, — դա վերջնական հաշվով ամենակարևորն ե, ամենինը, — դա վերջնական կաշվով ամենակարևորն է հաղթանանագլխավորը նոր հասարակական կառուցվածքի հաղթանականավես կի համար . . . կապիտալիզմը կարող ե վերջնականավես հաղթահարվել ու վերջնականավես հաղթահարվի նրանով վոր սոցիալիզմն ստեղծում ե աշխատանքի նոր, անհամենավելի բարձր արտադրողականություն»: Այդ առթիվ մատ ավելի բարձր արտադրողականություն՝ ա) արագութեալի հաղթանակի յերկու վրձենինը մատնահնեցել և սոցիալիզմի հաղթանակի յերկու վրձենինը մատնահնեցել՝ սոցիալիզմի արագության և ոլրողուկցիւական պայմանները՝ ա) արտադրության և համաժողովրդական հաշվառման այի բաշխման խիստ և համաժողովրդական հաշվառման վերահսկողությունը, բ) աշխատանքի արտադրողականության համազգային մասշտաբով բարձրացումը:

Սոցիալիզմի կառուցման ներկա պատմական ետապում վերոհիշալ յերկու պատմական պայմանները նոր վորակական բովանդակություն, ավելի վճռական նշանակություն են ստացել. տնտեսական շինարարության ճակատում մզված պայմանների ամբողջ պատմությունն ըստ եյության պայքար ե պայքարի ամբողջ պատմությունն ըստ եյության պայքարի հաղթանակը յերաշխավորող հիշալ յերկու սոցիալիզմի հաղթանակը յերաշխավորող հիշալ յերկու պայմանների իրականացման Այդ պայքարի միջոցնական պայմանների իրականացման պայմանների լիովին վերացվի այն հակառակությունը, ցով ե, վոր պետք ե լիովին վերացվի այն հակառակությունը կապիտալիզմից տխուր ժառանգությունը գոյություն ունի կապիտալիզմից տխուր ժառանգությունը մնացած արտադրական ուժերի համեմատական հերթյուն մնացած արտադրական ուժերի համեմատական հե-

տամնաց մակարդակի ու պլողքեսիվ ձևով զարգացող սոցիալստական հարաբերությունների միջև,

«Հաղթանակելու համար, սոցիալիզմը կառուցելու և  
ամրացնելու համար, պրոլետարիատը պետք է կապիտա-  
լի դեմ իր հեղափոխական կովի անմեռ հերոսությամբն  
աշխատավորների ու շահագործողների մասսան, այլև ամ-  
բողջ մանր-բուրժուական խավերը ներդրավի նոր տնտե-  
սական շինարարության ուղիում, նոր հասարակական հա-  
րաբերություններ, նոր աշխատանքային դիսցիպլինա, նոր  
աշխատանքային կազմակերպություն ստեղծելու ուղիում,  
վորը միացնում է գիտության ու կապիտալիստական տեխ-  
նիկայի վերջին խոսքը խոշոր սոցիալիստական արտադրու-  
թյուն ստեղծող գիտակից աշխատակերներէ».

(ԵՐԱԲԵՐ)

Բանվորության, կոլտնտեսական գյուղացիության մեջ  
այժմ միլիոններով են հաշվում այն առաջատար, գիտակից  
ու անձնվեր մասսաները, վորոնք իրենց ստեղծագործական  
ենտուղիազմով, իրենց աշխատանքային հերոսությամբ, իրենց  
կազմակերպչական ունակություններով վերաբաստիարակում  
են աշխատավորության մնացյալ զանգվածներին, ներդրավե-  
լովնրանց աշխատանքի սոցիալիստական ձևերի մեջ, վերափո-  
խելով նրանց գիտակցությունը, վերաբերմունքը դեպի աշ-  
խատանքը, դեպի սոցիալիստական գույքը։ Սոցիալիստա-  
կան (պետական, կոլտնտեսական և կոռպերատիվ) սեփակա-  
նության պաշտպանությունը յերաշխավորող ավելի հզոր,  
ավելի ապահով ազգակ չկա, քան աշխատավորական մաս-  
սաների կոմունիստական վերաբերմունքը դեպի աշխատան-  
քը, դեպի ժողովրդական բարիքը, նրանց գիտակցական,  
մասսայական պայքարը լողըերի, պարագիտների գեմ, վո-  
րոնք բնական դաշնակիցն ու գործակիցն են դասակարգա-  
յին թշնամու։ Հափշտակությունները, վատնութեները կան-

խող, դժվարացնող ավելի սեղմ, ավելի կոնկրետ միջոցն այն պրոֆիլակտիկ ձեռնարկումներն են, վորոնք պետք ե խստորեն իրազործվեն մեր ժողովրդական անտեսության, մեր պետական ապարատի բոլոր ողակների ներսում։ Այս ընույթի պրոֆիլակտիկ ձեռնարկումներից գլխավորները հետևյալներն են՝ կադրերի ուսումնասիրությունն ու զառումը, հաշվառման ու հաշվապահության կանոնավոր դրվագներ, իրական կոնտրոլի և ռեվիվիդայի ապահովումը, պահեստների, մթերանոցների, արդյունաբերական և առևտնագործության կոռագերատիվ ձեռնարկությունների պահպանության գործի լավ դրվագը (պահակներ, լուսավորություն, տեխնիկական միջոցառումներ, հակահրդեհային ձեռնարկություններ և այլն):

Հենց այն հանգամանքը, վոր իրենց տնտեսական պլա-  
քերից դուրս շպրտված նախկին կապիտալիստական դա-  
ստակարգերի մնացորդները (բուրժույթ-դործարաննատերը, կու-  
լակը, սպեկուլյանտ-միջնորդը և այլն) բանվորի և գյու-  
ղացու դիմակ հագած աշխատում են թափանցել մեր  
պետական ապարատը, մեր տնտեսության բոլոր բնագա-  
վառները, սողոսկել կոլտնտեսություններից ներս, հրա-  
մայական անհրաժեշտությունն եղարձնում ստուգել և դուրս  
շպրտել թշնամի, անհարազատ, ապադասակարգայնացած  
տարրերին, փորոնք վոչ մի դեպքում ցած չեն դնում իրենց  
պայքարի գենքերը, փորոնք ներքուստ դափում են մեր սո-  
ցիալիստական շինարարությունը, աշխատում են քայլա-  
յել թուլացնել մեր իրավակարգի տնտեսական հիմքը,  
հափշտակում, վատնում են հանրային սեփականությունը:  
ԽՍՀՄ-ի կենտրոնական գումարման 3-րդ նստա-  
շը շանում դրված գեկուցումների տվյալները և մեր իսկ  
իրականության մեջ արձանագրված բազմաթիվ փաստերը  
գալիս են հիմնավորելու այն դրությունը, վոր կոլտնտեսու-

թյուններում սողոսկած թշնամին—կուլակը հատուկ ձգտում  
է հայտաբերում դեպի հաշվառման հետ կապված պաշտոնները: Վիճեցնելով հաշվառման գործը, քառոսային դրության  
մատնելով հաշվապահությունը, կեղծելով, խարդախելով պա-  
հեսաների հաշվառման տվյալներն ու փաստաթղթերը,  
դասակարգային այդ թշնամինները կարող են ավելի հաջող  
կերպով կազմակերպել և թագցնել իրենց ֆնասարարություն-  
ները, հափշտակումներն ու վատնումները և այդպիսով  
գժգոհություն, անբավականություն առաջացնել կոլանտե-  
սականների մեջ, տնտեսապես, կազմակերպորեն քայլայել  
կոլտնտեսությունները, միաժամանակ վիճեցնել մթերում-  
ների, պետության հանդեպ յեղած պարտավորությունների կատարման գործը:

Ահա թե ինչու անհրաժեշտ և պարտավորեցնել կողմանական գործի հաջողություններին, հաշվետարձների, պահեստապետների և առնասարակ կոլտնտեսական գործի հաշվառումը տնութիւնող բոլոր պաշտոնները տալ կատահելի, հարազատ, աղսիվ ու ստուգված, խորհրդային իշխանության ու սոցիալստական շինարարության նվիրված մարդկանց։ Ահա թե ինչու ամեն մի խաբեյություն կոլտնտեսական գույքի, կոլտնտեսական աշխատանքի և կոլտնտեսական բերքի հաշվառման նկատմամբ պետք է համարել ոժանդակություն կուլակին և հակախորհրդային տարրերին, ընդունել վորպես փորձ կոլտնտեսական գույքը հափշտակելու և այդպիսի արարքների հեղինակներին պատժել 1932թ. ոգոստոսի 7-ի վորոշման բովանդակ խստությամբ։

Նույն յերևույթը կա նուռագաղում, մեր արդյունաբերության, մեր տրանսպորտի, կոռացիատիվ-մատակարարման ցանցում։ Բացի ջախջախված բուրժուազիայի մուացորդներից, նրանց գաղափարախոսներից և ապագասակարգայնացած ելեմենտներից, գեղի քաղաք են խուժում նաև ապա-

կուլակացածները, իրենց տնտեսական դիրքերից դաւրս շպրտված կուլակներն ու յենթակուլակները, տերտերն ու գյուղական չարչին և աշխատում են ու հաճախի հաջողում են խցկին մեր պետական ապարատի, մեր ժողովրդական տնտեսության այս կամ այն ողակում, հատկապես կոռուպերատիվ-առեւտրական ցանցում, տեղափորձում են այնտեղ վորպես «սպից», «վորակյալ», «փորձառու», «հմուտ» աշխատակիցներ և բնականաբար իրենց ամբողջ «մանագիտությունն» ու «փորձառությունը» գործ են դնում վորքան կարելի յև մեծ պատառ պոկելու մեր ժողովրդական բարիքից, բանվորի և կոլտնտեսականի անձնվեր աշխատանքով ձեռք բերված հանրային բարիքից, մյուս կողմից թուլացնել, կազմալուծել մեր ժողովրդական տնտեսությունը։ Յեկ քիչ չեն այնպիսի դեկավարներ, այնպիսի տնտեսավարներ, վորոնք կամ իրենց հանցավոր անփութության, իրենց հեղափոխական դաստիարակյին զգոնության բթացման հետեւանքով և կամ գիտակցական բարեհոգությամբ, նեխված հաշտվողականությամբ հովանավորում են դասակարգային այդ թշնամիներին, ապադասակարգայնացած տարրերին, այսպիսով հեշտացնում վասարարների, հափշտակիչների հոկանեղափոխական գործը։ Ահա նման տնտեսավարների նկատմամբ ե, վոր ԽՍՀՄ-ի կենտգործկոմի Նախագահությունը իր 27 մայիսի 1933 թ. վորոշումով հրահանգում է կիրառել ոգոսառությունը՝ 7-ի որենքը։

Հափշտակումների և վատնումները դժո պահպահութեաւ պայքարի կարևոր միջոցներից մյուսը հանդիսանում է հաշվառման և հաշվետվության գործի կանոնավոր զբաձրքը: Հաշվառման և հաշվետվության վատ զբաձրքը, քառային զբությունը բարենպաստ մթնոլորտ են ստեղծում դասակարգակին թշնամու վասարարության համար: Հետևաբար անտեսական որդանների և կազմակերպությունների (արդյունա-

բերության, տրանսպորտի, մատակարարման, առևտրի ու գյուղատնտեսության հանրայնացված սեկտորի) վարչությունները սխտեմատիկ, իրական պայքար պետք ե մղեն հաշվառման և հաշվետվության գործի դրվածքի բարելավման համար։ Մյուս կողմից, հսկող որդանները, ԲԳ տեսչության և արդարադատության մարմինները պետք ե վճռական ձեռնարկումների միջոցով արմատախիլ անեն հաշվառման ու հաշվետվությունը վարելու համար սահմանված կանոնները խախտելու ամեն մի հանցավոր փորձ, լինի դա հաշվապահական ու վիճակագրական աշխատողների կողմից, թե վարչությունների պետերի կամ տնտեսավարների կողմից։

ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանի 42-րդ պլենումն իր 27 փետրվարի 1933 թ. վորոշումով դատարանների հատուկ ուղղղությունն և հրավիրում հաշվառման և հաշվետվության բնագավառում ծագող հետևյալ հանցագործությունների վրա.

1. Հանրային (սոցիալիստական) սեփականությունը հավըտակելու կամ այդպիսի հափշտակումների հետքերը բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով հաշվառման ու հաշվետվության դիտակցաբար խճճումը և սխալ հաշվետվություններ ներկայացնելը։

2. Հաշվապահական ու վիճակագրական մարմինների աշխատակիցների կողմից հաշվառումը և հաշվետվությունը վարելու կանոնների չարամիտ խախտում, վորը հանգում և հիմնարկության կամ ձեռնարկության նորմալ գործունեյության կազմալուծման և հող ե ստեղծում չարաշհությունների համար։

3. Ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների վարչատնտեսական պերսոնալի (գործարանների դիրեկտորներ, խորհրդականությունների դիրեկտոր-

ներ, կոլանտեսությունների վարչություններ, ցեխերի պետեր, պահեստավետներ, խանութի վարիչներ և այլն) կողմից ակնհայտ կերպով համապատասխան միջոցներ ձեռք չառնելը դրանց կողմից զեկավարվող տնտեսական կազմակերպությունների և ձեռնարկությունների հաշվառումը և հաշվետվությունը կանոնավոր կազմակերպելու և պատշաճ վիճակում դնելու համար, վորի հետևանքով հիմնարկության կամ ձեռնարկության աշխատանքները գնում են դեպի քայլքայում։

4. Ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների վարչատնտեսական պերսոնալի կողմից «Համայնացված սեկտորի, հիմնարկությունների և տնտեսական կազմակերպությունների գլխավոր ու ավագ հաշվապահների իրավունքների ու պարտականությունների մասին» ԽՍՀՄ-ի Ժողկոմիորենի 1932 թ. սեպտեմբերի 29-ի վորոշման (Որ. և կարգ. ժող. նո. 72—1932 թ. հրատ. կետ 440) խախտումը—գլխավոր և ավագ հաշվապահներին հարկադրել չնախատեսված նպատակների համար կամ անհամապատասխան չափով ասիդնովկաներ դուրս գրելու, ֆինանսա-բյուջետային դիսցիլինայի կիռառման վերաբերյալ նրանց ցուցումների անտեսումը, նրանց նորմալ գործունեյությունը խանգարող պայմանների մեջ դնելը, բյուջեային դիսցիլինայի վերաբերյալ որենքի պահանջներն անշեղ կերպով կիրառող գլխավոր և ավագ հաշվապահների արձակումը կամ տեղափոխումը։

5. Պահեստային տնտեսությունը պատշաճ պայմանների մեջ դնելու համար ձեռնարկությունների, վարչատնտեսական պերսոնալի կողմից ակնհայտ կերպով միջոցներ ձեռք չառնելը, վորի հետևանքով պայմաններ են ստեղծվում ձեռնարկության գույքի ճիշտ հաշվառման և հաշվե-

տվության խանդարման և հնարավորություն տալիս չարաշահությունների:

6. Պահնների կատարում կամ գերակատարում ցույց տալու նպատակով դիտավորյալ կերպով վոչ-ճիշտ տվյալներ հաղորդելու:

7. Թերիտորական պարտքերի մասին ժամանակից ուշ  
տեղեկություններ տալը, գերիտորներին պահանջներ՝ ներ-  
